Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7012

281
L - 16

2

281
Ե-16
280
1118-ԿԿ
04 NOV 2009
1005
20599

ԼԱՄԱԳ

ՆՇՄԱՐՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝

Շուշու Հայոց Կոնսիստորիան: Աշոտ վարդապետ և Գառնակերեան: Մի քանի գծեր Բեսսարաբիայի, Խրիմի և Նոր-Նախիջևանի հայերի և հայ քահանաների կեանքից:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ.
1903

30 APR 2013

7012

Дозволено цензурою. С.-Петербургъ, 5 Іюня 1903 г.

Типографія Х. Бархударянцъ, Москва, Срѣтенка. Мясной пер., д. Бѣляева.

ՆՇՄԱՐՆԵՐ

Շուշու Հայոց Կոնսիստորիան: Աշոտ վարդապետ և Գառնակերեան:

Այն օրուանից, երբ Ռուսահայոց հոգևոր գործերի վերաբերմամբ կառավարութիւնը սահմանել է Պոլոժենիէ կոչուած օրէնսդրութիւնը, այդ իսկ օրուանից էլ Շուշում՝ իբրև առաջնորդանիստ քաղաքում՝ հիմնուել է կոնսիստորիան, որ Պոլոժենիէի համաձայն կազմակերպուած է նախագահից, որ ինքն է թեմական առաջնորդը, երեք անդամ քահանաներից, որոնց նշանակում կամ արձակում է առաջնորդն իւր հայեցողութեամբ, ապա ատենադպրից, էկզուկուտուրից, արխիվարիուսից, որոնց նշանակելն ու արձակելը տեղի է ունենում դարձեալ առաջնորդի միջոցով:

Պոլոժենիէն սահմանելուց, անդրանիկ առաջնորդը Շուշում եղել է Հասան-Ջալալեանների վերջին շառաւիղ՝ Բաղդասար Արքեպիսկոպոսն, որ կրում էր և Դիոցեզիայի տիտղոսը: Իսկ ներկայումս առաջնորդ է Գրիգոր եպ. Գառնակերեան, որ առաջնորդական պաշտօնն ստանձնել է 1900 թուականի սեպտեմբերի սկզբներին:

Կոնսիստորիան հիմնած օրից սկսած մինչև օրս Ղարաբաղի թեմի բոլոր անկիւններում շարունակ տրտունջներ ու գանգատներ են լսուել թէ առաջնորդների, թէ անդամների և թէ մեացեալ ծառայողների վերաբերմամբ, բայց այդ գանգատներն այնքան սուր կերպարանք չէին ստացել մինչև 1887 թուա-

կանը, այսինքն մինչև Կովկասում հայերին ևս ի շարս այլոց զինուորական ծառայութեան ենթարկելը: Եւ այդ բոլորի պատճառները գլխաւորապէս ծննդական վկայականներն էին, որոնց ձեռք բերելու համար ժողովուրդը միշտ նեղութիւնների և զանազան զոհաբերութիւնների մէջ էր:

Կոնսիստորիան նոր էր կարգուած: Նոր, անծանօթ օրէնսդրութիւն էր և նորա պահանջները ճշտիւ կատարելու դժուար ըմբռնելու պարտականութիւն էր դեռ քաղաքի քահանաների համար, իսկ գիւղական քահանաների համար հօ այդպիսի հաստատութիւնը զարմանք էր:

Այն ժամանակ գիւղական քահանաներից շատերը գրել չգիտէին, իսկ կարդալ — մի կերպ կարդում էին: Սաղմոսն ու շարականը նորանք բերան էին արել և այդպէս էլ քահանայագործում էին:

Նոյն իսկ Բաղդասար միարոպօլիտը մինչև իւր մահն էլ անկարող եղաւ պօլժենիէ յօդուածները կէտ առ կէտ ըմբռնել: Իւրաքանչիւր գործ կանոնաւոր համարներով մատեան մտցնելը նորա համար տարօրինակ նորութիւն էր: Գործերի վերայ համարաթիւ (№) դնելը նա առանձին շնորհ էր հաշուում: Եթէ պատահմամբ որ և է գրութեան վերայ հարկ էր լինում համարաթիւ դնել և եթէ այդ գրութիւնը մեծ մարդկանց համար էր, այն ժամանակ նա հրամայում էր իւր գրագիր և ծառայ Ցարդանն որ էն մեծ համարը դնէ, որպէս զի այս ինչ աղա՛ն չնեղանայ:

Արդ՝ այսպիսի ժամանակներում ծիծաղելի չէ՞ր լինիլ, եթէ պահանջուէր քահանաներից, որ ծնուածները և թաղուածները կանոնաւոր ցուցակագրութեամբ և ճիշտ տարեգրութեամբ մատեան մտցնէին:

Եւ ի հարկէ նորանք անուշադիր էլ թողնում էին ու շարունակում նախնի ձևով՝ ծնուածը մկրտել, մեռածը թաղել, պսակուել ցանկացողներին՝ պսակել. — ու ոչ մատեան էին ճանաչում, ոչ էլ որ և է գրքի մէջ տարեթիւ նշանակում:

Եւ այսպէս դուցէ շարունակուէր մինչև վերջը, դուցէ առաջ չգար որ և է նեղութիւն, եթէ հրապարակ չգար զինուորական ծառայութեան պարտաւորութիւնը:

Զինուորական ծառայութեան ենթարկուածներին ցուցակագրում է պետական պաշտօնեան: Իսկ ցուցակագրուած երիտասարդների տարիքն անթիւ անգամ ենթարկուել է թիւրիմացութիւնների: Շատ անգամ նորանց մեծացրել են, շատ անգամ էլ փոքրացրել: Այդ ձևով էլ վարուել են զինուորացուների հայրերի տարիքների հետ: Իսկ յայտնի է, որ զինուորական ծառայութեան ենթարկուածներից ոմանք ունեն արտօնութիւններ, որով ազատւում են ծառայելուց: Արտօնութիւններից մէկը կապուած է դարձեալ տարիքի հետ:

Սակայն, եթէ պետական պաշտօնեաները, որոնք այն ժամանակ նշանակւում էին տգէտ ու գռեհիկ մարդիկ, սխալացրել են տարիքը, փառք Աստուծոյ, օրէնքով կարելի է այդ սխալը ուղղել: Իսկ օրէնքն իբրև անհերքելի ապացոյց ճանաչում և ընդունում է ծննդական վկայականը: Այդպիսիներն էլ ասացինք, որ սկզբներում չէին գործածում, հետևաբար և վկայականներ չկային կոնսիստորիայի արխիւում:

Օրէնքը թոյլ էր տալիս քննութեամբ ձեռք բերել այդպիսի վկայականները: Քննիչները նշանակւում էին քահանաներից: Նշանակողն էլ կոնսիստորիան է: Այժմ կարելի է երևակայել խեղճ ժողովուրդի գրութիւնը, որ պիտի վեղ ծռէ կոնսիստորիային, որպէս զի բարեհաճէ քննիչ նշանակել, ապա վեղ ծռէ քննիչ քահանային, որ բարեհաճէ շուտով գործը քննելու և վերջապէս բաղխէ այս և միւսի դռները, որ դան և ճշմարիտ վկայութիւն տան քննիչ քահանային:

Բայց պէտք է չմոռանալ, որ նախ քան քննութիւն նշանակելը դեռ պարտ են քրքրել արխիվը, որ, ո՞վ գիտէ, դուցէ և կայ մատեաններում, կամ չէ՞ որ օրէնքով արխիվարիուսը պէտք է մակագրութիւն տայ, որ ինքը մատեանները որոնելով չի գտել, ուրեմն և չկայ այս ինչ անունը, որ հետևաբար պէտք է քննութիւն նշանակուի:

Եւ այսպէս մի խեղճ մարդ գիպլոմական ձեռք բերելու համար խնդիր պիտի ներկայացնէ կոնսիստորիային, որ ունի բազմաթիւ դժուարութիւններ: Խեղճը դիցուք մի արհեստաւոր է, ծախք է արել ու խնդիր գրել տուել, ապա խնդիրը տարել է կոնսիստորիա, որ յանձնէ ատեանին, բայց այնտեղ խոչնդոտի է պատահում, պահապան է կանգնած շէմքում և նա ամեն խնդրատուի հեշտութեամբ չի թողնում ներս մտնել: Դեռնաբոցէ է հարկաւոր և խեղճ, անբախտ արհեստաւորը, որ օրուայ ապրուստը հազիւ է ձեռք բերում, մի երկու շաբաթ գնալ-գալով, վեղ ծռելով, վերջապէս մի երկու օրուայ քրտինքի վաստակը դեռ դռնապանին տալով, կարողանում է ներս մտնել, խնդիրը ներկայացնել:

— «Գնա, լաւ, արխիւը կնայենք ու կասենք». լսում է

խեղճը զառամած ատենադպրի կոպիտ խօսքը։ Իսկ եթէ համարձակուի հարցնել թէ ե՞րբ գայ պատասխան իմանալու, նա լսում է կատաղի գոռոց.—«ես ի՞նչ գիտեմ, գնա Ջանբէկից հարցրու»։

Ցեռուցեռ դուրս է գալիս խեղճ արհեստաւորը։ Ջանբէկի մասին հարցնում է դռնապանից։

—Հո՞, բացականչում է դռնապանը, կանաչ երեքանոց ունի՞ս. Ջանբէկն ուրիշ մարդ է։

—Երեքանո՞ց...

Արհեստաւորը մնում է արձանացած. «երեքանո՞ց»... շշընջում է ինքն իրան, գլուխը կորացնում, մտածում, ապա երկնքին նայում ու մի խոր հառաչ արձակելով, դարձեալ դռնապանին դիմում։

—Ի՞նչպէս կարելի է տեսնել Ջանբէկին։

—Գնա նորա տան առաջ սպասիր. մի ժամից յետոյ նա դուրս կգայ, այնտեղ կխնդրես։

Գնում է խեղճը, կանգնում է փողոցում՝ ցեխի մէջ, ձիւնի, անձրևի տակ։ Սպասում է Ջանբէկին։

Մի ժամ անցնում է, երկուսն էլ լրանում, վերջապէս երևում է մի չոր, ցամաք, ալեխառն մազերով, ակօսապատ դէմքով, բարակ, ցիցառի վզով, խունացած գլխարկով ու վերարկուով պաշտօնեայ։ Դա է Ջանբէկը — կոնսիստորիայի արխիվարիուսը։

Արհեստաւորը մօտենում է նորան, վերցնում է գլխարկը, շշնջում է «աղա» ու այլ չի կարողանում խօսել։

Բայց Ջանբէկը Սհակբէկի պէս կոշտ ու կոպիտ չէ. ընդհակառակն սա շատ քաղցրախօս է, հեզ է և, իւր ասելով, պե՛ղ մարդ է։

—Ցի՞նչա, Բալա՝, յի՞նչ ըս ուզում. հարցնում է արհեստաւորին։

Քաղցր ոճը ոգևորում է թշուառին և նա յայտնում է, որ ինքը խնդիր է տուել և որ «Եկլապաս-ն ասաց, որ արխիմը պէտք է նայել։

—Օ՜, ընդհատեց Ջանբէկը, պե՛ղ, դա իմ ձեռին ա։ Ես քո գործը կարգի կբերեմ և տղադ «ալբաս-ի-նից կազատեմ։

Արհեստաւորն այդ խօսքերը լսելով, չգիտէ ուրախութիւնից ի՞նչ անել, ի՞նչպէս խօսել, ի՞նչ խոստանալ։ Տանն ընկած պղնձէ կաթսան է պատկերանում աչքի առաջ, որ տանէ, ծախէ և վարձատրէ սիրելի, բարերար Ջանբէկին։

Բայց ի՞նչ է լսում։

—Է՜, տասը մանէթանոց ունի՞ս. հարցնում է բարի Բէկը։

—Տասը՞... շշնջում է արհեստաւորը և էլ չի խօսում։

—Հա՛, ես պե՛-ղ մարդ եմ, փողը կառնեմ, գործդ կտեսնեմ։

—Ջանբէ՛կ, գլխիդ մատաղ, կաթսան կծախեմ, շատ շատ մի չորս մանէթ կը ստանամ։

Ինչ և իցէ, կաթսան ծախւում է։ Ջանբէկը մի ամիս ձրգձգելուց յետոյ, մտնում է արխիւ, նայում է գրքերը թէ ոչ վերջապէս յայտնում է, որ այս ինչ անունը մատեաններում չկայ։ Ուրեմն պէտք է քննութիւն նշանակել։ Եւ քննութիւն ձեռք բերելու համար արհեստաւորն ուղիղ նոյն ձևով, նոյն ճկած վզով դիմում է քննիչ գործակալին, ծխատէր քահանային և վկայողներին և, էլ ինչ ասել է հարկաւոր, որ տանն էլ գորգ ու կաթսայ չի մնում։ Իսկ մինչև վկայաթուղթ հանելը որդին ենթարկւում է զինուորական ծառայութեան, վիճակը վերցնում է և անցնում զինուորների շարքը։

Եւ տանը միակ աշխատաւոր որդին թողնում է ծերունի հօրը, պառաւ մօրը և մի շարք դեռափիփթ քոյր ու եղբայր անխնամ, Աստուծոյ կամքին։ Ու մինչդեռ բարեխնամ և հոգատար կառավարութիւնը օրէնք է սահմանել այդպիսիներին արտօնութիւն տալու, թողնելու տանը՝ նեցուկ դառնալու, շնորհիւ Ջանբէկների «ալ-պաշտօնավարո-ղնեաց», լայ ու սուգը տիրում է այդպիսի հաղարաւոր, տասը հաղարաւոր արհեստաւորների, գիւղացիների և առհասարակ օրէնք չիմացողների տանը։

Կոնսիստորիայի պաշտօնեաներն ստանում են շատ սահմանափակ ռոճիկ։ Ատենադպիրն ստանում է յիսուն ռուբլի, էկզուկուտորը երեսուն, արխիվարիուսը քսանուհինգ, մնացեալները տասը կամ եօթը ռուբլի,—ռոճիկ, որ առանին կեանքի մէջ հաղիւ կարելի լինի, ինչպէս ասում են՝ ձէրը ձէրին հասցնել։ Իսկ դորանք եթէ քիչ էլ սեր ունենան լրագրի, գրքերի, թատրոնի և այլ կարևոր բաւականութիւնների պէտք է անպատճառ պարագի տակ լինին։ Սակայն այդպէս չէ։ Այդ ծառայողներն, որոնք բոլորն էլ վերջին աղքատ տներից են եկել, որոնք խպտառ զուրկ են փոքր ինչ բաւարար ուսումից, մտել են կոնսիստորիայ տրեխներով, ու ցնցոտիներով, մտել են նախ ձրի ծառայելով, մէկից ու միւսից մի երկու, երեք կոպէկ հացի փող առնելով, ապա գրագիր դառնալով և 15 — 20 տարի

ծառայելուց յետոյ միայն՝ տէր են դարձել 36—40 ռ. ամսականների։ Է՞, կարելի չէ ենթադրել, որ այդ մարդիկ, որոնք և ամուսնացել են աղքատ ընտանեաց օրիորդների հետ, որոնք մի այլ պարապմունք չեն ունեցել, պէտք է ապրած լինէին շատ սահմանափակ չափով և շատ անգամ էլ զրկանքներով։

Սակայն այդպէս չէ։

Կոնսիստորիայի ծառայողները ոչ միայն փառաւոր ապրել ու ապրում են, ոչ միայն ծառայ ու աղախին ունեն, այլ և տէր են նորանք սեպհական տների, այգիների, վերջերն էլ սկսել են մասնակցել այս և այն առևտրական գործերի։

Իսկ այդ բոլորի աղբիւրը՞։

Ջանբէկերին կաթսայ մեկնող արհեստաւորներին յիշելով, չէ կարելի՞ հասկանալ...

Ճիշտ այդպիսի շրջաններ էին մտնում և բազմաթիւ հաս ու հասի, պաղաբաժինների և քահանայական զանազան խնդիրներ։

1895 թուականից մինչև 1900 թ. Շուշու թեմը առաջնորդ չունէր, հետևաբար կոնսիստորիայի գործերը ղեկավարում էին առանց նախագահ եպիսկոպոսի։

Դեռ 1895-ից մինչև 1897 թ. Գ. վ. Սաթունեան ժամանակաւորապէս կառավարում էր առաջնորդի պաշտօնը, որին էլ արտօնուած չէր վիճակաւոր առաջնորդի լիակատար իրաւունքները և որից յետոյ կոնսիստորիայի մէջ ծառայողները գործերը վարում էին a la pro domo sua.

Եւ Ղարաբաղի մեծածաւալ թեմի պահպանութիւնը մնաց երեք անդամ քահանաների, ատենադպրի պաշտօնակատարի և էկզուկուտուրի ձեռին։

Քահանաներից երկուսը՝ իբրև հին-հին օրերի փշուրներ, Ալլահը գիտէ թէ՝ այդտեղ ինչ միտումների վերայ էին թուխս եկել։

Առաջնորդ չկայ, ուրեմն չկայ և հսկող աչքը, իսկ այդ ամբողջ վարչութեան ղեկը մնացել էր ատենադպրի պաշտօնակատարի և էկզուկուտուրի ձեռին։

Իրաւ է՝ Մատթէոս վ. Մատթէոսեան 1898 թ. կոնսիստորիայի նախանդամի պաշտօն էր վարում և իրան յատուկ աչալրջութեամբ նայում էր շուրջը, սակայն հայր սուրբն անզօր էր վերոյիշեալ երկու պաշտօնեաների օրէնք շինած սովորութիւններին ձեռնամուղ լինել։ Նախ, որ իւր դրութիւնն էլ երերուն էր, երկրորդ՝ նորանց օրէնք շինած սովորութիւնները շատ խոր արմատներ էին ձգել, որոնք ի չէք դարձնելու

առաջնորդ էր հարկաւոր—վիճակաւոր առաջնորդ՝ իւր լիակատար իրաւունքներով, այլ և կոնսիստորիա ու թեմ ղեկավարելու ընդունակութիւններով։

Եւ 1898 թուականից սկսուեց կոնսիստորիայի դէմ անվերջ գանգատներ ու տրտունջներ կարկտալ ազգիս Վեհափառ Կաթուղիկոսի դիւանատան մէջ։

Այդ անթիւ գանգատաւորների ասելով, կոնսիստորիան դարձել է վերուվար և զեղծումներն ալեկոծւում են նորա բոլոր գործերի մէջ։ Հասը հաս է դառնում, մետրիքական վկայականները վաճառւում են կանաչ-կարմիր կտտուներով, այս և այն եկամուտները անձնական գրպաններ են տանում և այլ այսպիսի տեղեկութիւններ, որոնց Վեհ. Հայրապետն այլ ևս անկարող լինելով հանդուրժել, որոշեց մի արժանաւոր քննիչ ուղարկել, ազատել կոնսիստորիան կեղեքող ճիրաններից և բաւարարութիւն տալ ժողովուրդի արդար պահանջներին։

Քննիչ է նշանակւում Սինոդի անդամ՝ Բարձրապատիւ Աշոտ վարդապետը, որին Վեհափառ Հայրապետը լիակատար իրաւունք է տալիս ամենայն գործ կարգադրել ըստ իւր (Հայր Աշոտի) հայեացքի։

Այդ ժամանակ Ս. Սինոդը կազմուած էր չորս անդամներից։

Եւ Աշոտ վարդապետը՝ Սինոդի չորս անդամներից մէկը՝ ընդհանրական Հայրապետից լիազօրութիւն ստացած՝ գալիս է Շուշի, կոնսիստորիայի գործերը քննելու այն միջոցին, երբ այդտեղ չկայ առաջնորդ, երբ բոլոր գործերը վարում են ստորին ծառայողները։ Եւ նա գալիս է՝ իւր ամենաբարձր իշխանաւորից հրահանգուած, կարգադրելու ամեն բան իւր հայեցողութեամբ։

Շուշու կոնսիստորիան էլ կազմակերպուած էր այսպէս. անդամներ՝ Գարեգին ա. քահայ Յովհաննիսեան, Կարապետ քահանայ Դանիէլեանց, Աղեքսանդր քահանայ Բաղդասարեան, ատենադպրի պաշտօնակատար՝ Միրզա Տէր-Սարգսեան, էկզուկուտուր Յովսէփ Շահնազարեան, արխիվարիուս Թէոս Տէր-Յովհաննիսեան։

Գանգատներն ու տրտունջները բացառապէս բորբոքուած էին երկուսի դէմ՝ Միրզա Տէր-Սարգսեանի և Յովսէփ Շահնազարեանի։

Սակայն որքան սորանք յանցաւոր են, այսուհանդերձ պակաս պատասխանատու չեն և հայր անդամները, որոնք ա-

առաջնորդի բացակայութեան ժամանակ, իրանք in corpore ներկայանում են իբրև առաջնորդական տեղապահ։

Այն քահանաներից միայն հայր Տէր-Գարեգինն ունի ժողովրդի յարգանքն ու համակրանքը, մնացեալների մասին մենք չունենք մի առանձին կարծիք։

Աշոտ վարդապետը մանրամասն քննելով, այլ և անձամբ տեսնելով Ղարաբաղցիների բորբոքուած զայրոյթը, կարգը վերականգնելու ու խաղաղութիւն մտցնելու, այլ ոչ մի յարմար միջոց չգտաւ, եթէ ոչ արձակել կոնսիստորիայի ամբողջ կազմը և նշանակել բոլորովին նորը։

Այդպէս էլ նա կատարեց։

Իսկ նորա այդպիսի անվեհեր դատաստանը և դրական վճիռը բացառիկ երևոյթ պէտք է համարել մեր հոգևոր հերարխիայում տեղի ունեցող գործերի մէջ։

Իշխանաւորն անպատճառ դրական բնաւորութիւն պիտի ունենայ,—անյողդողդ կամք...

Եւ այս դէպքում Աշոտ վարդապետը օրինակ կարող է լինել շատ առաջնորդների, որոնք շատ ու շատ դէպքերում ականջները խոնարհեցրած են աղա դարձած զանազան խաբեբաների և պնակալէզների։

Ապա հայր Սուրբը նշանակեց նոր ատենադպիր, նոր էկզուկուտուր, նաև նոր անդամներ։

Այս կարգադրութեամբ Ղարաբաղցիների ուրախութիւնն ի հարկէ, մեծ էր։ Կարծես լերան չափ մի շարաւահոտ պալար տապալուեց ամբողջ ժողովրդի մէջքից։

Աշոտ հայր Սուրբն իւր կարգադրութեան մասին զեկուցեց Վեհափառ հայրապետին, որ ընդունեց մեծ սիրով։ Ինչ մնում էր Սինոդին, նա էլ հօ չէր կարող ամենայն հայոց հայրապետի հաւանած վճիռը չընդունել։

Սակայն կոնսիստորիայի երկու պաշտօնեաները՝ ատենադպրի պաշտօնակատարը և էկզուկուտուրը դիմում են Վեհին, բողոքելով Աշոտ վարդապետի դէմ, խնդրելով, կամ իրանց խղճայ և վերստին յանձնէ պաշտօնները, կամ եթէ այդպէս չլինի, օն ուրեմն փաստեր հրապարակ բերուի։—Փաստեր կաշառակերութեան, կեղեքման, ստութեան և այլն. . . . . .

Նախ, միջանկեալ ասենք, որ այդ պարոնները դատի չը-հրաւիրեցին այն լրագրներին, որոնք հրապարակօրէն և համարձակ, նաև յականէ և յանուանէ՝ կաշառակեր, կեղեքիչ, տարահոչակ և այլ այսպիսի ածականներ գրոշմեցին իրանց ձակատներին, երկրորդ՝ ուրեմն են յղում իրանց բողոքը։

Վեհ Կաթուղիկոսին։

Բայց ոչ ապաքէն Աշոտ վարդապետին՝ իբրև քննիչ նշանակել է Վեհ. Կաթուղիկոսը և ապա մեծ սիրով էլ հաւանութիւն տուել ու ընդունել նորա քննութեան արդիւնքը։

Հայոց եկեղեցւոյ վարչութիւններում, ի բաց առեալ Վեհ. Հայրապետը, կա՞յ մի այլ բարձր իշխանաւոր, կամ վերջապէս Աշոտ վարդապետը իրաւունք չունէ՞ր, առանց չոր, ցամաք փաստեր լուսաբանելու վճիռներ դնել, հաղարաւոր ժողովրդի բողոքների ու դանդատների վերայ հիմնուելով։ Ո՞չ ապաքէն պետութեան սահմանած օրէնքով առաջնորդները կամ այս և այն հաստատութեան կառավարիչները իրաւունք ունին պաշտօնից արձակել այն ծառայողներին, որոնք զեղծումներ են կատարում, սակայն որոնց զեղծումները փաստերի վերայ դնելու հնարաւորութիւն չի լինում (օր. կաշառակերութիւնը), իսկ առաջնորդները քանի որ կասկած ունին և վերջապէս լաւ գիտում ու համոզւում են, որ զեղծումներն անուրանալի են, ուստի այդ համոզմունքով արձակում են այդպիսի ծառայողներին։

Իսկ Աշոտ վարդապետը եթէ Ղարաբաղի թեմի առաջնորդ չէր, կամ կառավարիչ, բայց նա Վեհի հրամանով Ղարաբաղ էր եկել առաջնորդական իրաւունքներով, այն էլ այդտեղ առաջնորդ չեղած ժամանակ։

Արդ՝ էլ ո՞վ պիտի վերաքննէր կոնսիստորիայի երկու պաշտօնեաների գործը և ի՞նչ անուն պիտի տրուէր այդպիսի կարգադրութեան։

Սակայն ներումն հայցել Նորին Սուրբ Օծութիւնից այդ հակառակ չէ ընդունուած էթիկէթին։ Վեհն էլ որոշ զիջողութիւններ շնորհեց։ Այսպէս՝ արձակուած քահանաներին հրամայեց, որ իւր պաշտօնատեղին գնալուց, ցուցակ ծառայութեան ստանան և հեռանան։ Նոյնպիսի կարգադրութիւն որոշուած էր և երկու պաշտօնեաների համար, որ և ի կատար ածելու՝ յանձնուած էր նոր նշանակուած առաջնորդ Գառնակերեանին։

Գառնակերեան առաջնորդ հաստատուեց 1900 թ. Օգոստոս ամսին և Շուշի պիտի ուղևորուէր Սեպտեմբերի սկզբներին։ Վեհափառ հայրապետն առանձնապէս հրամայեց նորան, որ իւր պաշտօնատեղին գնալուց, ցուցակ ծառայութեան տայ այդ պաշտօնեաներին և ընդ միշտ մինդամայն պաշտօնից արձակ համարէ նորանց։

Սակայն Գառնակերեան Շուշի գալով այլ դրօշակ բաց արաւ։ Խաղաղութեան առաքեալի աշակերտը իւր դրօշակի ծալքերում նոր-նոր աղմուկներ ու անախորժութիւններ պատճառող խնծորներ բերաւ իւր հետ, որով ժողովուրդի սիրտը կրկին յուզուած ծով դարձրեց։

Կոնսիստորիայի նոր ատենադպիրը հրաժարուեց պաշտօնից։ Իսկ Գառնակերեան այդպիսի մի շնորհ էր որոնում։ Նա իսկոյն դիմեց Երևան իւր մի խնամիին, որ շտապէ Շուշի, ատենադպրի պաշտօն վարելու։

Բայց խնամին աւելի պարտաճանաչ հանդիսացաւ և մերժեց այդ առաջարկը։

Անցաւ մի երկու օր և յանկարծ ուրիշ ջուր սկսեց սողալ Գառնակերեանի մինտարի տակով։

Եւ նա կամաց կամաց սկսեց այս և այն շրջաններում յայտնել թէ՝ Միրզան խեղճ է, մեղք է, հիւանդոտ է, վերջապէս թէ այդ Միրզան իրան խնդրել է, աղաչել. ասել է՝ երեխաները քաղցած են տկլոր են, բոբիկ են, վերջապէս չոքել է, արտասուք թափել և այլն։

Ժողովուրդն արդէն հասկացաւ, որ բայրամի կանաչ-կարմիր կատուն սկսել է վազվզել առաջնորդարանի հոյակապ սենեակներում։

Վերջապէս հոռվմը աղտաւում է երկունքից։ Ղարաբաղի նորագոյն առաջնորդը յայտնում է, որ կոնսիստորիայի պաշտօնեաների վերաբերմամբ ինքը համաձայն չէ Աշոտ վարդապետի և ոչ մի կարգադրութեան հետ։ Եւ թէ ինքը պիտի քննութիւն նշանակէ ու եթէ նորանք արդարացան, այնուհետև վերստին իրանց նախկին պաշտօնները պիտի ստանձնեն։

Լուեց ժողովուրդը։ Սպասեց հանդիսատես լինելու այդ քննութեան, համոզուելով, որ ստատից նշաւակի համար բիւրաւոր առարկաներից զատ՝ այլ ոչինչ չպիտի թափուեն։

Սակայն դրօշակը փողփողում է և այլ ծալք է ծածանւում։

Անուանի Միրզային, որին ոչ մի դատաւոր դեռ չէր արդարացրել, Նորին Սրբազնութիւնը, հակառակ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի տնօրէնութեան, հրամայում է մտնել կոնսիստորիա և գործերը ղեկավարել մինչև որ... մինչև որ քննութիւն կլինի։

O, tempora! O, mores!

Զգիտենք ինչ անունով մկրտել այսպիսի վարմունքը։

Եւ մենք պատեհ ունեցանք այդ կարգադրութեան մասին իրանից—Գառնակերեանից լսել։

Ահա թէ ինչ է պատրուակում։

—Խի՛, յինչ կըլնի, Միրզան լաւ մարդ ա, մանաւանդ որ նորան ընտի եմ դրել, որ կոնսիստորը պահէ (պահէ՞?!) մինչև որ իրա գործը կքննուի. թէ որ արդարացաւ հօ լաւ ա, ընդմիշտ էլ կմնայ, չէ՝ յանցաւոր գտնուեցաւ՝ փախ կտամ։

—Բայց ձեզանից առաջ նորան հեռացրել է Սինոդի անդամը, այն էլ Վեհափառ Հայրապետի հրամանով, այժմ որ օրէնքի հիման վերայ դուք դեռ ոչինչ չպարզած՝ նորան մըցնում էք կոնսիստորիա, ուր մի քանի ամիս վարել է այդ պաշտօնն ուրիշ անձնաւորութիւն, ոչ ապաքէն այդ Միրզան կարող է նորա թղթերի և գործերի մէջ հազար ղեղծումներ մտցնել, ապա նորա գլխին բարդել։ Դուք անշուշտ լաւ էք հասկանում, որ այնպիսի մի հաստատութեան հետ, ինչպիսին որ կոնսիստորիան է թեթև աչքով չպիտի վերաբերուել։ Վերջապէս՝ չէ՞ որ ձեզ արդէն որոշ հրահանգներ է դրուած. ինչո՞ւ իշխանաւորի խօսքը սրբութեամբ և ճշտութեամբ չպիտի կատարուի։

—Ջանըմ, ի՞նչ ես ասում. յարեց Գառնակերեան, ձախ ուսն առաջ ձգելով, աջ ոտը յետ դնելով, ապա աջ ցուցամատը երկար մեկնելով ու ծայրը դնելով կրծքին, աւելացրեց. ես ըտոնք դիփ լաւ գիտամ, ես շատ մեծ գործեր եմ վարել, հլա շատ առաջնորդ իմ աշակերտներն են եղել. այս անգամ սրբազանն երկու ցուցամատների ծայրերն իրար շփելով, խօսքը շարունակեց. ես Թեսաւորսը դիփ անգիր գիտամ, ի՞նչ ես ասում։

Ուղիղն ասած, ոչինչ չհասկացայ. Թեսաւրոս, Գառնակերեան, Շուշու կոնսիստորիա... ի՞նչ կապ, ի՞նչ առնչութիւն։

—Ո՞չ ապաքէն, ասում եմ Գառնակերեանին, ամենայն Հայոց Հայրապետի հրամանը ճշտիւ պիտի կատարուի։

—Ի՞նչ ես ասում, ուսերը շարժելով ու ժպտալով խօսում է Գառնակերեան, ես առաջնորդ եմ, ես ըտոնք դիփ լաւ գիտամ, խի՛, դու չե՞ս իմանում, որ հիմա ես գո-քէրնոպ եմ, ոնց որ կուզեմ, ընենց էլ կանեմ։

—Գո-քէրնոպն էլ պարտաւոր է որոշ օրէնքով ընթանալ. կարո՞ղ է մի գո-քէրնոպ նախարարի հրամանը զանց առնել։

—Քի՛հ, քի՛հ, քի՛հ... ծիծաղում է այդ շատ երկայն բոյով սրբազանն, ապա դարձեալ ցուցամատերն իրար քսելով,

խօսքն է շարունակում. «ախր ոնց անեմ, Միրզան խեղճ ա, պիտի ոնց որ ըլի «էկլապաս» շինեմ նորան։

—Ուրեմն դուք արդէն նորան ընդունել էք։

—Չէ, հըլա քննութիւն կըլի։

—Ո՞վ պիտի քննէ։

—Տենանք, հեալպաթ մինին կնշանակենք։

—Ո՞ւմ պիտի նշանակէք։

—Կարելի ա, որ գործակալին յանձնեմ։ Տէր-Մեսրոպն էլ հետը մրտի կ.քենեն։

Այժմ ամենայն ինչ կատարեալ է։

Այդ երկու քահանաների անուններն եթէ արդէն հրապարակի վերայ են, այն էլ իբրև քննիչների, այնուհետև արդէն հասկանալի է թէ այդ եպիսկոպոսն ո՛րքան ողբալի շրջանի մէջ է մտցնում Ղարաբաղի կոնսիստորիայի անբախտ դրութիւնը։

Այդ աստիճան ըմբոստութիւն, կարգապահութիւնը ցեխի մէջ նետելու այդչափ յաւակնութիւն՝ սպասել չի կարելի մի ամենահասարակ պաշտօնեայից, ուր մնաց, որ այդպիսի քաջագործ ասպետը մի եպիսկոպոս է հանդիսանում, մի մեծածաւալ թեմի առաջնորդ։

Եւ ո՞ւր մնաց Հայրապետական հրամանը, ինչո՞ւ համար էր եկել Աշոտ վարդապետը, ի՞նչ ծախսեր էր, որ կոնսիստորիան նետում էր աջ ու ձախ, ասացէ՛ք, ի՞նչ կոմեդիաներ էին դորանք։

Այժմ պէտք է ծանօթանալ Գառնակերեանի նշանակած երկու դատաւորների հետ։

Երկուսն էլ շատ տխուր հռչակի տէր քահանաներ են, երկուսն էլ ժողովուրդի մէջ, ինչպէս ասում են, յայտնի պրտուղներ։

Տէր-Մեսրոպ, որին ժողովուրդը գիտէ Տէր-Դաշ-ըլէ անունով, այդ իսկ ժամանակ ինչ որ գործի համար դատի տակ էր, ինքը վերջին ծայր տգէտ, ձեռնադրուել է քահանայ յիսուն տարեկան հասակում, իսկ այդքան հասակն անց է կացրել դարբնոցում։ Աշխարհի քօռացած միջոցին՝ զանազան պրոնաքցիէ-նէրով կարողացել է մուրճն ու սալը, ածուխն ու փուքսը մի կողմ դնել, սուրբգառ ծածկել, քահանայ դառնալ։ Գիտէ թաղման ու մկրտութեան շարականները, գիտէ անուն ստորագրել։

Գործակալ Էյվազենց Տէր-Ակոբը, դեռ ասենք, որ իւր անունն սկզբում ստորագրում էր. Հաքոբ կայանայ և այլն։ Վերջը Հ-ն շինել է Ց. էլ ուրիշ ոչինչ։ Վերջապէս մի անձնաւորութիւն, որի մասին խօսելը միմիայն զուր ժամավաճառութիւն պիտի համարել։

Եւ ահա Գառնակերեանն այս տեսակ անձնաւորութիւնների քննութեան է յանձնում այն մարդկանց գործը, որոնք արդէն դատուել են Վեհափառ Տիրոջ հրամանով և դատապարտուել Սինոդի անդամ վարդապետի քննութեամբ։

Եւ քննեցին այդ քահանաները... Ասե՞լ թէ արդարացրին։

А судьи кто? բացականչում է Գրիբոեդևի Զացկին։

Երկու արտաքսուած պաշտօնեաները Գառնակերեանի վեղարի ստուերում նորից ստացան իրանց աթոռները, ապա սկսուեց ծն մի հալածանք դէպի կոնսիստորիայի միւս ծառայողները, որոնց Աշոտ վարդապետը մեղաւոր չգտնելով, թողել էր իրանց տեղերում։

Կոնսիստորիայի անդամ՝ Վարդապետեան Տէր-Կարապետը քաջութիւն է ունենում երկու անուանի պաշտօնեաներին արդարացնող վերդիկտն չկցորդել իւր ձայնը և դորա համար արձակւում է անդամութիւնից։

Արձակւում է արխիվարիուս Թէոս Տէր-Յովհաննիսեան, որին Գառնակերեան դեռ Շուշի եկած օրից շոյել, գուրգուրել է ու դեռ շատերի մօտ ասել. «վալլահ, էս Թէոսը լաւ մարդ ա, ո՛րքան ես ըսաի ըմ, սրբան ոչ-ով տեղից չի շարժի»։

Մի խօսքով սկսում է այդտեղ տիրել մի անհանդուրժելի բէժիմ — մի կատարեալ անիշխանութիւն։

Այսպէս բառբառեց ինքն իրան Թէսաւրոս համարողը և նորա բառբառոյ ձայնը, բազիններում հնչուող բրամինի ձայնից ոչ պակաս ոյժով հնչուեց։

Բայց տեսնենք ո՞ւր է արշաւում Գառնակերեանը։

Ազգիս Վեհափառ Հայրապետը սաստիկ բարկանալով այդ վարմունքներից, հեռագրով հրաման է ուղարկում անյապաղ արձակել կոնսիստորիայի երկու պաշտօնեաներին և նորանց տեղ նշանակել ուրիշները։

Եւ Գառնակերեան պատասխան է ուղարկում Վեհին.

—Ես առաջնորդ եմ և իմ գործերի մէջ պէտք է չխառնուել, ես ընդունել եմ այս պաշտօնեաներին, պէտք է մնան իրանց տեղերում, իսկ եթէ Դուք չէք համաձայն, ընդունեցէք հրաժարականս, միայն այն պայմանով, որ Շամախու թեմն ինձ յանձնէք։

Ահա հնազանդութեան, հեզութեան և պարտաճանաչութեան առաքեալի վարմունքը։ Ուրիշ հերարխիաներում առաջ-

Նորդների կամ կառավարիչների հրամաններն եթէ ենթարկուեն Գառնակերեանների պատասխանի, հասկանալի է թէ՝ ի՞նչ պատիժ կշարժուի, ի՞նչ ազսորանք. էլ չենք ասում Հայրապետական հրամանների, որոնք ինչպէս և կան պէտք է ընդունեն ամենայն սրբութեամբ և որի ամեն մի խօսքը պէտք է կատարուի տեղն ու տեղը ամենայն ճշտութեամբ:

Կարելի է երևակայել թէ՝ ի՞նչ կանէ այդ միևնոյն Գառնակերեան, եթէ մի օր մի կարդադրութիւն անէ դիցուք գործակալի վերաբերմամբ և նա նորան ըմբոստանայ, բացասական պատասխան տայ, մերժէ, արհամարհէ...

Կամ ի՞նչ կանեն այդ խոկ տէր-էյվազները, եթէ իրանց մի ինչին հրամանն անուշադիր թողնէ մի ժամկոչ մի տիրացու:

Զո—«պէրը չէ՞ նեսիլ նորանց գլխին, որպիսի դէպքերը և յաճախ տեղի են ունեցել:

Ցաւ ի սիրտ Վեհափառ Հայրիկը ծայրահեղ բարի է, ապա թէ օրինականն այն է, որ իւր ստորադրեալից այդպիսի պատասխան ստանալուց, այլ ևս չվարանի և առանց այլ և այլութեան կանչէ նորան Ս. Էջմիածին, պաշտօնազուրկ դարձնէ և ուղարկէ հարիւրաւոր վանքերից մէկը:

Գառնակերեաններն, որոնք առաջնորդական աթոռ բաղմելը երաղ պիտի համարէին, որոնց համար կոնսիստորիա, վանական կալուածներ, թեմական դպրանոց հսկելու պարտաւորութիւնը եթէ մոքովն անցնէին սարսափ պիտի զգային, բայց . . . . . առաջնորդ են դառնում...

Աշտա վարդապետը Շուշի գալով, մի ամսի չափ մնալով, կոնսիստորիայի վերաբերմամբ կարևոր անօրինութիւններն անելուց յետոյ, այցելեց Ղարաբաղի վանքերը, լեռվին տեղեկացաւ նորանց կալուածների և առհասարակ նորանց անտեսական դրութեան մասին և ապա վերադարձաւ Ս. Էջմիածին:

Սակայն վանական կալուածների վերաբերմամբ այլ էին Գառնակերեանի հայեացքները:

Այդ կալուածներն անկասկած պիտի յանձնուեն մի կառավարչի, որ անպատճառ օժտուած լինի անտառային անտեսութիւն ղեկավարելու հմտութիւններով:

Եւ նախ քան Գառնակերեանի այդտեղ գալը կալուածների կառավարիչն այդպիսի մի անձնաւորութիւն էր.—մի երիտասարդ պարոն անտառային ճեմարանի վկայականով: Ուղիղն ասած, մենք չիմացանք տրտունջների պատճառը, չիմացանք և այն թէ վերջը՝ կառավարիչ պարոնը ինքնակամ թո-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922

1005

ղեց իւր պաշտօնը, թէ հոգևոր իշխանութիւնը հրաժարեցուց նորան: Այսքանս գիտենք, որ Գառնակերեանի օրոք այդ պաշտօնը թափուր մնաց և Գառնակերեան ձրագ առաւ ու դարձեալ վանական կալուածների կառավարիչ որոնել: Շատ ման եկաւ թէ քիչ, ուսում առած, կամ անտառային մասնագիտութեան մէջ հմուտ մարդկանց հաւանեց թէ չուզեց, փաստն այն եղաւ, որ այդ պատասխանատու պաշտօնի համար վերջ ի վերջոյ գտնում է մի մարդ... Եւ ի՞նչ մարդ:—Երբեմն հեռագրատան ծառայող մի անձնաւորութիւն, որ իւր կեանքում կալուածներ կառավարելու ոչ մի գրաւական չէ լոյս հանել և որի գլուխը հեռագրատան չորս պատերի մէջ զարդարուել է ալիքներով:

Այդպիսի անյայտ և մի շատ օտար ծառայութեան ասպարիզում արդէն ծերացած անձնաւորութիւնը, բնական է, որ չէ կարող պտղաւէտ լինել, չէ կարող Գանձասարի, Ամարասի և այլ վանքերի մեծաթիւ կալուածներից որ և է արդիւնք առաջ բերել:

Այդ ահագին կալուածների ղեկն այդ տեսակ անձնաւորութիւնների ձեռին մնալով, արդիւնքը շատ դառն պիտի լինի և այդ կալուածների եկամուտով պահպանուող հիմնարկութիւնները, ի՞նչ ասել է հարկաւոր, որ միշտ զրկանքների մէջ կմնան:

Մեր հոգևոր իշխանութեան մի շարք հաստատութիւնները կատարեալ անկելանոց են դարձել, իսկ այդ հաստատութիւններից Գառնակերեանների հովանաւորութեան տակ գտնուածները, անկելանոց լինելուց մի բան էլ աւելի են:

Եւ Գառնակերեան վանական կալուածների հետ այդքան հեշտ կերպով խաղալով, նորա եկամուտների դռներին էլ դառն կնիք դնելով, այժմ տեսնենք ինչպէս վերաբերուեց թեմական դպրանոցի հոգաբարձութեան ատենադպրի հետ, որ ութսուն տարեկան դառնալով, արդէն զառամել է և մի շատ ծանր բեռ դարձել հոգևոր կառավարութեան համար, որին սակայն վաղուց որոշել էին հանգիստ թողնել:

Այդ զառամեալ ծերունին, հինաւուրց Ակոբ-բէկը, ապահով, մինչև իսկ հարուստ անձնաւորութիւն է, տակաւին չէ կամենում թողնել իւր շահաւէտ պաշտօնը: Ոչինչ չէ շինում և չէ էլ կարող շինել, վասն զի անցել են խալիֆայական օրերը, անցել քառասնական թուականների գերազանցապէս «հաբներ»ով սկսուող արձանագրութիւնների և զանազան խնդրագրերի գործածութեան ձևը: Այդ Ակոբ-բէկն, արդէն դարձել է թատրերկ

գրողների ժառանգութիւն, սակայն Գառնակերեան այդպիսի մարմնացած Պլիւշկիններից քաշւում է, որովհետև նա ազգակցական կապեր ունի տեղական աղաների հետ, իսկ աղաների ԷՖԷՆ դիպչելը Թէսաւրոսի անունով հպարտացողի համար ծանր է, շատ ծանր։

Եւ պատճառաբանում է Գառնակերեան իբր Ակոբ-բէկը սպառնում է, որ եթէ իրան հեռացնեն, այն ժամանակ նա ծանր հարուած կհասցնէ թեմական դպրանոցին։ Եւ ահա թէ ինչպէս։

Շուշեցի հարուստներից մէկը տասը թէ քսան տարի առաջ տասը հազար ռուբլի փող է կտակում յօգուտ թեմ. դպրանոցի։ Կտակակատարներից մէկը նշանակւում է ծերունապչրանք Ակոբ-բէկը։ Այժմ այդ ծերունին սպառնում է, որ եթէ իրան չթողնեն մինչև մահ (որովհետև ուխտել է) մեծ հոգաբարձութեան ատենադպրի պաշտօնում և շարունակ ստանալ տարեկան եօթը հարիւր և քսան ռուբլի. այն ժամանակ նա կբեկանէ այդ կտակը և դպրանոցը կզրկուի տասը հազար ռուբլուց։ Եւ այս տղայական սպառնալիքից իբր վախում է «դրդացա» Գառնակերեանը, այդ իսկ պատճառով էլ?! ամուր բռնել է նորա փէշից և բևեռել ատենադպրի աթոռին։

Հարցնում ենք. ո՞ր կտակակատար իրաւունք ունի որ և է կտակ փոխելու, կամ եթէ այդպիսի իրաւունք էլ ունենայ, աւելի լաւ չէ՞ այդ տասը հազար ռուբլուց ձեռք վերցնէ դրպրանոցը, քանի որ ծերունի Ակոբ-բէկն երկու անգամ աւելի արժէ դպրանոցի համար։ — Տարեկան եօթ հարիւր և քսան ռուբլի ինքն է ստանում, երեք հարիւր ռ. իւր անկարութեան պատճառով օգնականի է տալիս։ Ուրեմն տարեկան հազար և քսան ռուբլի։ Բայց ո՞րքան տոկոս է բերում տասը հազար ռուբլին։ Արդ՝ քաջարի Ակոբ-բէկն այդ գումարը չէ՞ լրացնում իւր համար և տրրդացնում իւր՝ խուրջինի նման դրպանը։

Նորա պաշտօնը առանց օգնականի էլ յանձն կառնէ իւրաքանչիւր գործին գիտակ անձնաւորութիւն տարեկան նոյն իսկ հինգհարիւր ռուբլով։

Սպասել հոգաբարձուներից, որ նորանք նկատի առնեն դպրանոցի շահերը, վերջ դնեն ազգային հաստատութիւնները անկեալների հանգրուան շինելուն, երեխայութիւն կլինի, վասն զի հոգաբարձուներից շատերը հեռու-հեռու խնամիներ են Ակոբ-բէկի հետ, շատերն էլ այն կարծիքն ունեն, որ առանց

ութսուն տարեկան խալիֆայական Ակոբ-բէկերի անկարելի կլինի գործ առաջ տանել։

Ի՞նչ կարելի է սպասել այդ հոգաբարձութիւնից, որի գանձապահը մի տգէտ, գռեհիկ ներկարար է, շուշեցիների բերանում ծաղը դառած Բոյաղչին, որը դպրանոցի հոգաբարձութեան, կամ այս և այն վարչութիւնների մասին նոյնքան հասկացողութիւն ունի, որքան մի ապլէ կարող է ճաշակ ունենալ Մարիա Սրբ-սրբ'ի պոռ-ալէպի մասին։

Մարդ սարսափում է, տեսնելով թէ ինչպէս արիւնքրտինքով ձեռք բերուած հիմնարկութիւնների հետ խաղում են այդքան դիւրութեամբ և թէ ինչպէս անփոյթ կերպով ներս են խծկում այնպիսի Բոյաղչիները, որոնց ներկայութիւնն իսկ ծաղրելի է։

Որ Ջոբվիլի նիւթերը քիչ չեն մեր հոգևոր իշխանութեան հաստատութիւններում, որ Ակոբ-բէկերի ու բոյաղչիների պէս հերոսներն անթիւ են և որ նորանց հետ կազմած նիստերի լուսանկարները պակաս ծիծաղաշարժ չեն, անհերքելի է։

Ապացոյցի համար համառօտակի մէջ բերենք այդ նիստերից դէթ մէկի նկարագիրը։

Հոգաբարձական նիստը բացուած է։ Գառնակերեան և հոգաբարձուներ բազմել են սեղանի շուրջը։ Ակոբ-բէկը գլուխը տատանելով, մի կողմում նստած ինչ որ բան է գրում և յաճախ քթի ու շրթունքների շարժումով իւր գրադրին այս և այն միտքը հասկացնում։

Բոյաղչին մատը վեր ու վար է անում արխալուղի կոճակների վերայ, մերթ ընդ մերթ քիթն ու ծոծրակն է քորում, գլուխը յետ ու առաջ շարժում և իբր այդպիսով թէ Գառնակերեանի թէ հոգաբարձուների խօսքն է հաստատում։

Ի՞նչ է այդ հոգաբարձուների խօսակցութեան նիւթը։

Ոմանք տրտնջում են օրուայ եղանակի մասին և աստղաբաշխական գիտութիւններով!!! ապացուցանում, որ ժամանակը փոխուել է, ժամանակի հետ էլ փոխուել են եղանակները։ Մէկը հաստատում է, որ Իբրահիմ խանի ժամանակ ձմեռը սաստիկ շոգ է եղել և ամառն ընդհակառակը սաստիկ ցուրտ։ Միւսը հարց է մէջ բերում թէ՝ ով քանի տարեկան է։ Ակոբ-բէկն իսկոյն տասը տարի գրուանի տակ է դնում և իւր տարիքը հաշւում ինչ որ մթնած տարու յիշատակի հետ, կամ համեմատում «ոռ-պ ֆէ-հի տարեթուին։ Մի տասը

տարի էլ Գառնակերեանն է փոս գցում, յարելով ընդ նմին, որ ազգի հոգսերն ալեք են դրել գլխին և բաւական էլ տգեղացել է ինքը, ապա թէ ոչ ինքը տակաւին ջահիլ է, երրորդը գանգատ է յայտնում մթերքների թանկութեան վերաբերմամբ և վերջապէս կամաց-կամաց սկսում են մի երկու խօսք էլ դպրանոցի մասին ասել։

Իսկ այդ զրոյցների միջոցին ծերունի ատենադպիրը զբրում է.—«Հազար ինը հարիւր և մէկ թիւ։ Համարաթիւ այսքան։ Լուան։ Այսր տարուայ յամսեանն Օգոստոսի (կամ Սեպտեմբերի) խորհուրդ գումարեալ վիճակաւոր առաջնորդն թեմին Արցախու Տէր Գրիգորիոս Գառնկելեան ընդ հոգաբարձուք թեմական դպրանոցին Արցախու, որ է և Ղարաբաղու, զի արժան դատեցաք ընտրել ի պաշտօն տեսչութեան զմեծապատիւ տեառն Բենիկ վարդապետի և այլն։

—Ի՞նչ գրեցիր, Ակոբ-բէկ, հարցնում է հոգաբարձուներից մէկը։

—Արձանագրութիւն։

—Արձանագրութի՞ւն. բացականչում է «քի՛հ, քի՛հ», ծիծաղելով, Գառնակերեան։

—Հրամել էք։

—Պա, ո՞նց իմացար թէ մեր միտքն յի՞նչա, հլա մի բան չասեցինք։

—Ես գիտեմ, սրբազան ջան, ես Ակոբ-բէկն եմ, գլուխս ըստեղ ա սիպտակել։

—Տեսնումը՞ս, Սրբազան, ասումին թեաղա ջահիլներ նշանակենք, նրանց ուէխը յինչա, որ Ակոբ-բէկի տեղը բռնեն, ասում է հոգաբարձուներից մէկը։

Իսկ Ակոբ-բէկը գլուխը շարժելով, շշնջում է ինքն իրան. —Է՜, սրբազանը հեալեայ խօխայ ա՛, խօխայ։

Մեր կարծիքով Ղարաբաղի թեմի գործերը փոքր ինչ կարգի բերելու համար՝ լաւն այն կլինէր եթէ Վեհափառը եպիսկոպոս ձեռնադրէր Աշոտ վարդապետին և ուղարկէր Շուշի։ Մանաւանդ նորա Շուշի գնալուց յետոյ, երբ արդէն բաւական ծանօթացել է տեղոյն հոգևոր գործերի հետ։

Վերջապէս առաջնորդացուի սով չկար հօ, որ Ղարաբաղի շլենքին մի Գառնակերեան փաթաթուեց։

Նորընծայ Բարդուղիմէոս եպիսկոպոսը (Գէորգեան), որի արդարութիւնը, իդէալի հասցրած ճշմարտութիւնը, նաև բազմակողմանի զարգացումն ու բարձր ընդունակութիւնները յայտնի են Սուրբ Էջմիածնի ամբողջ միաբանութեան, յայտնի իրան՝ Վեհափառ Հայրապետին, այլ և ազգայիններից շատ շատերին, տակաւին պաշտօն չունի։ Իսկ իբր թեմական առաջնորդ՝ համարձակ կասենք, որ Բարդուղիմէոս Սրբազանը ականաւոր տեղ պիտի ունենայ առաջնորդների շարքում, վասն զի դորա համար նորա տուած զրաւականները շատ են։

Բաւական է յիշել նորա առաջնորդութիւնը Թաւրիզում դեռ վարդապետ եղած ժամանակ այն էլ սորանից մի տասն ու հինգ տարի առաջ։

Թաւրիզում, ուր առաջնորդները մի տարուց աւելի չեն մնում, ուր կուսակցական պայքարներն անվերջ են, բայց որպէս, որչափ կարողացել է Բարդուղիմէոս առաջնորդը զրաւել ժողովուրդի սէրը, սիրտը, որ 1893 թ. ազգիս Վեհափառ Կաթուղիկոսի ս. օծման հանդիսի ժամանակ պատգամաւոր եկած պ. Փանարջեանը Վեհափառից խնդրում էր Հ. Բարդուղիմէոսին վերստին Թաւրիզ ուղարկել, առարկելով, որ նորա բեղմնաւոր առաջնորդութիւնը չի մոռացուում այնտեղ։

Հօ այդպիսի օրինակն էլ դժուար է պատահում։

Ո՞ր եպիսկոպոս, ո՞ր առաջնորդն է հայերի մէջ մի թեմ, մի քաղաք գնացել և ապա այնպիսի հետք, այնպիսի յիշատակ թողել, որ երկրորդ անգամ կրկին նորան խնդրեն, նորա սէրը հայցեն։

Գառնակերեանների պէս հին-հին օրերի մնացորդներն անկարող են ժամանակի և հանգամանքի պահանջի հետ գնալ։ Թեմական առաջնորդները, մանաւանդ այնպիսի թեմերում, ուր կայ և թեմական դպրանոց, որը մի թեմի մէջ եկեղեցական գործերի բարգաւաճման գլխաւոր գործօնն է, պէտք է լինեն լուսամիտ, լայն հայեացքների տէր և դպրանոցի դրութիւնից հասկացողութիւն ունեցող անձնաւորութիւններ։

Առաջնորդը պէտք է լաւ տեղեկութիւն ունենայ և վանքերի ու կալուածների դրութիւնից, նաև լաւ ծանօթ պիտի լինի Հայաստանեայց եկեղեցւոյ ծէսերի և արարողութիւնների հետ։

Առաջնորդը պէտք է կարողանայ քարոզ խօսել, քարոզի նիւթ պիտի ունենայ, փոքր ինչ էլ պերճախօս պիտի լինի։ Նա պիտի ծանօթ լինի և ժողովուրդի նիստ ու կացին և նորա առանին հոգսերին, կուզէք մինչև իսկ փոքր ի շատէ ընդունուած էտիկէտներին։

Այսպիսի յատկութիւններ որոնել Գառնակերեանների մէջ՝ ի հարկէ տղայութիւն կլինի։

Իսկ եթէ հարկաւոր են եպիսկոպոսացուներ, այն ժամանակ ասացէք. եթէ մինդարի վերայ մեծացած մի փոշոտամիտ Ս. Փիլոյեան, որ մի ուրիշ հոգևոր հերարխիայում հաղիւ թէ կարողանայ տիրացուի պաշտօն ստանալ, իսկ մեզ մօտ եպիսկոպոս է ձեռնադրւում, ինչու ուրեմն եպիսկոպոս չձեռնադրել 10—12 տարուայ համալսարանական կամ մի շարք արդէն արժանիք ցոյց տուած զարգացած վարդապետների:

Ղարաբաղի թեմը՝ Շուշի, Նուխի քաղաքներով և մի քանի հարիւր գիւղերով, մօտ տասը վանքերով, ահագին տարածութեան վերայ ընկած անտառներով, վերջապէս թեմական դպրանոցով մի հմուտ առաջնորդի կարիքն ունի:

Գանձասարի պատմական վանքը, Հասան Ջալալեանների որբանը, ուր կաթուղիկոսներ են ապրել, ուր նոյն իսկ ոչ շատ հեռու ժամանակներում ուսումնարան է եղել, այժմ մատնուել է կատարեալ մոռացութեան, որ տեսնողի վերայ արտասուալի տպաւորութիւն է թողնում: Այն ինչ նորա շուրջը տասը հաղարից աւելի դեսեատին անտառներ կան. — անտառներ, որոնք իրանց վեթխարի ծառերով մի-մի հարստութեան աղբիւրներ են:

Բայց կրկնում ենք, որ Գառնակերեանները անկարող են այդպիսի վանքերին հսկել — անկարող, վասն զի զուրկ են տընտեսական վիճակ հասկանալուց:

Գանձասարից ոչ պակաս է Ամարասը և ուրիշ շատ վանքեր, սակայն որոնցից ստացած արդիւնքը ներկայումս շատ ընչին է և մինչև իսկ ամօթալի:

Եւ դեռ այդպիսի վիճակի մէջ այդ ահագին կալուածների կառավարութեան գլուխը յանձնւում է մի ծերացած Ռէլիգիոզ:

Մի ծանր խնդիր ևս կախուած է Ղարաբաղի մեծածաւալ վիճակի վերայ, որի լուծումը թեմի առաջնորդին է կախուած, սակայն որը Գառնակերեանների այժից սպասելը մեծ միամտութիւն կլինի:

Դա քահանայական խնդիրն է, որ խղճալի և միանգամայն ամօթալի վիճակի մէջ է:

Դեռ Շուշում — քաղաքի մէջ քսանի չափ քահանայ կայ և ոչ մէկը նորանցից տէր չէ միջնակարգ ուսումի: Դիցուք թէ մի տէր Գարեգին իւր երկար փորձառութեամբ և տոկուն գործունէութեամբ ընդհանուր համակրանք է վաստակել, բայց ի՞նչ է ճնացեալների դրութիւնը: Կան և Կարապետ ու Յարութիւն Վարդապետեաններ, աւարտած Շուշու թեմական դպրանոցը, այն էլ դեռ այն ժամանակ, երբ դպրանոցի ուսումը սահմանափակւում էր չորրորդ դասարանում, իսկ ընդհանրապէս քահանաները, եթէ դիցուք դորանց էլ չհաշուենք շատ ագէտ են մինչև իսկ գռեհիկ:

Նորանք բոլորն էլ դարձել են թանկարանի նիւթեր, գոնէ իբրև խաւարի տիրապետութիւնից ճնացած յիշատակներ: Փիլոն է միայն, որ ծածկում են, սաղաւարդ դնում գլխներին, բայց այդ գլխների մէջ կամ նորանց սրտի խորքերում ոչինչ չի կարելի գտնել, որ համապատասխան լինի քահանայական կոչման, աւետարանի աշակերտի սքեմին:

Իսկ եթէ այդպէս է քաղաքում, հեշտ է կարծեմ երևակայել թէ ի՞նչ ողբալի վիճակի մէջ կլինեն գիւղերը, որոնք շրջապատում են այդ քաղաքին, կարելի է երևակայել և այն անթիւ քահանաները, որոնք կենդանի օրինակն այդ քաղաքիցն են առնում:

Տգիտութիւնը ձմերային խաւար գիշերուայ պէս տիրում է ամենուրեք:

Քահանայական խնդիրը ներկայումս հայերի մէջ հրատապ խնդիրներից մէկն է: Ժամանակը հասունացել է և ամենուրեք արժանաւոր քահանաների պահանջը յոյժ զգալի է դարձել:

Իսկ այդպիսի պահանջը Ղարաբաղում աւելի քան զգալի է:

Ինչպէս առհասարակ բոլոր հայաբնակ տեղերում, նոյնպէս և Ղարաբաղում եկեղեցիները չափազանց ողորմելի վիճակի մէջ են: Փոշին, անմաքրութիւնը, սրբազան թափուելը միշտ, ամենուրեք անբաժան տարր է հայ եկեղեցիների համար:

Մենք պատեհ ունեցանք Ղարաբաղի մի քանի գիւղերն այցելել: Շատ տեղերում տեսնում էինք եկեղեցու դռները բաց, պատահական կոփ ու եղը մէջը ապաստանած, անձրևի ժամանակ ջուրը պատերով թափուելիս: Շատ և շատ եկեղեցու կտուրներին մի հասարակ փայտէ խաչն էլ գոյութիւն չունի: Քահանաներից շատերը կարդալ-գրել չգիտեն, սերտել են միայն մի շարք աղօթքներ ու շարականներ, այդպէս և հովուում են իրանց հօտը:

Սակայն այդ գիւղերի համար գործակալ է նշանակւում, որ շրջում է ամեն տէղ, տուրք է հաւաքում և պաղաբաժին առնում:

—Մի՞թէ եկեղեցու այսպիսի դրութիւնը չի՞ն տեսնում գործակալները. հարցնում եմ մի գիւղացու:

—Նա իսկի ժամ էլ չի մտնում։

—Հապա ինչո՞ւ համար է գալիս։

—Ինչո՞ւ համար. զղերի նման գալիս ա, հրամայում՝ ձեռաց ծպէջ մորթել, յետոյ ուտում, խմում, պտղաբաժինն առնում, անցնում, գնում։

Ո՞ւր է տանում այդ պտղաբաժինը։

—Ես ի՞նչ գիտամ, ասում ա կոնսիստորի համար է, սուրբ էջմիածնի համար. մեռնեմ Նորա սուրբ զօրութիւնին....

Գիւղացին երեսին խաչ է հանում։

—Լաւ, ի՞նչպէս է վարւում աւելի աղքատ գիւղերում։

—Որ ոչինչ չի լինում՝ ՌՈՒՆԱ հանում ամանից, գուլպայ ա հաւաքում։ Մի խօսքով դատարկ չի գնում։ Զենք էլ իմանում. գրուստ հասնում է սուրբ էջմիածնին, մեռնեմ Նորա սուրբ զօրութիւնին. ախր գիտամ, որ չի հասնում, թէ չէ ս. էջմիածնայ համար կեանք չենք խնայիլ. մեղ պահողը Նա ա, մեր զօրաւորն ա։

Անկեղծ ձշմարտութիւնը բնորոշող են վերջին խօսքերը։

«Սուրբ էջմիածնայ համար կեանք չենք խնայիլ»։ Կեղծիք չկայ այս խօսքերի մէջ։ Դա միամիտ գիւղացին է արտասանում։ Նա գիտէ, որ հայութեան պարծանք կայ—Սուրբ էջմիածին և նա չի խնայում իւր լուման ձգել Նորա գանձանակի մէջ։

Այդ իսկ խօսքերը լսելով, մենք լիովին հաւաստիանում ենք, որ «Աբյաքան+» լրագրի մէջ (1893 թ.) մի անգամ յայտնած մեր կարծիքը թէ հայ ժողովուրդի կամաւոր տուրքը (ծուխը 20 կոպ.) եթէ կանոնաւոր ցուցակագրութեամբ ժողովուի, սուրբ էջմիածինը իւրաքանչիւր տարի կանոնաւոր պարբերութեամբ ոչ պակաս քան 50—70 հազար ռուբ. եկամուտ կունենայ։

Այդպիսի տուրք Մայր Աթոռին պարտ են տալ ի հարկէ ոչ միմիայն ռուսահայերը։ Այդ պարտքը աշխարհի ամեն անկիւնում գտնուած հայինն է։ Ո՞չ ապաքէն սուրբ էջմիածինը բովանդակ հայութեանն է և Նորա Գահակալը հայրապետ ամենայն հայոց։

Դեռ անարատ և վառ է ս. էջմիածնի սէրը հայ ժողովրդի սրտում։ Սակայն չի՞ սառչիլ այդ սէրը, եթէ վերոյիշեալ պատմուածքի պէս՝ բախտախնդիր գործակալները գնան շահագործեն ս. էջմիածնի անունը, որպիսի վատ վարմունքն արդէն գիւղացին էլ հասկացել է։

Առհասարակ նկատուած է, որ գործակալները միշտ հարբստանում են, փափուկ կեանք են վարում, իսկ բոլորի աղբիւրը, ինչպէս տեսանք, միամիտ ժողովրդի քրտինքն է, որ Նորանց խաբեբայութիւններին հաւատալով, առաջներն են թափում ամեն մի բարիք։

Առաջնորդներն այդ բոլորը լաւ գիտեն, սակայն Նորանց ի՞նչ փոյթ, թէ մի տէր-Իւան, կամ մի տէր-Ակոբ կեղեքեցին այս և այն գիւղացուն, ձոխացրին իրանց գրպանները և մաս չհանեցին պատշաճաւոր հաստատութիւններին։ Այո, Նորանք չեն պատժում գործակալներին, վասն զի գործակալների հարբստութեան մի մասը իրանց փէշերի տակն է անցնում։

Առաջնորդները պարտաւոր են տարէնը մի անգամ իրանց թեմերն այցելել։ Ղարաբաղի առաջնորդի համար առողջապահական տեսակէտից էլ լաւ է, մանաւանդ ամառ ժամանակ շրջել գիւղերը, որոնք ընկած են գեղաձիծաղ լեռների լանջերին, ծաղկաւէտ հովիտներին, ուր ամենուրեք օդն սքանչելի է, ջուրը կենարար, բնութիւնը հօ չքնաղ։ Ի՞նչի նման է ամբողջ տարին քաղաքում նստել, առաւօտից մինչև երեկոյ համարիչով զբաղուել կամ ապլաՈՒ փարաջան հագնել մէկին ու միւսին վիզիտ անել։

Առաջնորդներին Նուշում մնալու համար վեց ամիսը շատ բաւական է։ Տարուայ մնացած ժամանակները թէկուզ մինչև իսկ սքանչելի գարնան և թէ Ղարաբաղի զովասուն ամրան պէտք է շրջել գիւղերը, գործերին անձամբ վերահասու լինել, եկեղեցիները կարգի բերել, քարոզ խօսել, ժողովրդին հասկացնել իրանց պարտականութիւնները, ապա անցնել վանքերը, ուշի ուշով տեղեկանալ կալուածների դրութեան մասին և միով բանիւ ամեն ինչ աչքով տեսնել, ամեն մի խօսք ականջով լսել և ամեն ունեցած ձեռով շօշափել։

Էլ ի՞նչ կայ աւելի պախարակելի, քան պղերգի պէս ընկնելը, և ծերունազարդ ապերների հետ Փանահ-խանի ու Ախտա-խանի զրոյցներով զբաղուելը։

Առաջնորդը միշտ զրոյցի համար չէ...

Անընդունակ առաջնորդները կամ կքանդեն թեմի գործերը կամ ոչինչ չեն անիլ։ Բայց չարիքից փոքրագոյնը ոչինչ չանելն է։

Սակայն Ղարաբաղի միտրոպոլիտի աթոռակալը այլ կերպ հանդէս եկաւ։ Մի ոսկր էր մտնել Նորա գլուխը, որ հրում էր միշտ դէպի անկում։ Նա տարասկոնցու պէս ինքն իրան մեծ էր հրաւակայում, շատ մեծ։

Գո-Քէրնոպ է պիտի անէ, ինչ որ ուզենայ, նորա ձեռը բռնող չկայ և չպիտի լինի: Օ՜, նա ոչ անընդունակ, այլ տեսէք թէ ինքն իրան որպիսի ուսումնական, գիտնական է համարում:

—«Гречъ»-ի գրամատիկը լաւ գիտամ, ոնց չէ. ասում է նա և մատների վերայ հոլովում. իմ հանիտելնի, դվիստվիտելնի, իզվենիտելնի. ըսենց չէ՞:

Բայի այդ, ո՞չ ապաքէն անգիր գիտէ Թեսաւրոսին, իսկ շատ վաղուց գիտէր Սոկրատէսին, լսել է Կիկերոնի, Վիրգիլէոսի մասին, սակայն դորանց ոչ մէկին էլ նա չի հաւանում, այդ պատճառով էլ բոլորին մոռացել է:

Եւ չնայած, որ հին-հին օրերի մի անգոյն յիշատակարան ներկայանալուց, այսօր աւելի մի բան չէ, այսու ամենայնիւ ոսկրը զսպանակի պէս խթում է գլխին և այն ժամանակ նա բացականչում է «ես Գո-Քէրնոպ եմ, ոչ ոք իրաւունք չունի ինձ հրահանգներ տալու»:

Եւ մոռանում է Աւետարանի աշակերտը, որ Աստծունը պէտք է Աստծուն տալ՝ Կայսրինը Կայսրին. մոռանում է, որ գլուխ ունի, որ նա է և գլուխ համայն Հայաստանեայց եկեղեցու, մոռանում է, որ իրան Գո-Քէրնոպ դարձնողը այդ գլուխն էր—Սրբազնագոյն Հայրապետը, որ կարող է մի օր էլ իրան ս. Էջմիածնի գռնապանը դարձնել:

Սակայն այդպէս չէ երևակայել և չէ երևակայում Գառնակերեան և ահա թէ նախ քան Շուշի գալը ի՛նչ կարծիք է յայտնել ինքը՝ Ղարաբաղի թեմի և իւր ապագայ գործունէութեան վերաբերմամբ:

—Իմ տեղը շատ լաւ ա, ասել է նա, Ղարաբաղցիք էնքան առաջնորդ են քշել, որ հմի ով որ ըլնի չեն կարայ բան խօսել, ընտոր որ լեզուները կարճ ա:

—Ինչո՞ւ չեն կարող, ինչո՞ւ է լեզուները կարճ:

—Ո՞նց կարան. մի պատի խօսեն, դիպ նորանց կմեղադրեն. պա չե՞ն ասիլ թէ՝ խի՞ չէք առաջնորդի հետ հաշտւում. միթում ըտոնք ես չգիտե՞մ, էն էլ ե՞ս, որ Թեսաւրոսը բերան գիտամ, ասումըմ, որ ինչ էլ որ անեմ, բան չեն խօսալ, ըտոնք գիտի ես լաւ գիտամ:

Ահա թէ ինչպէս է մտածում գերապատիւ առաջնորդը ժողովուրդի համար, ի՞նչ մտքով է առաջնորդւում ժողովուրդ ու թեմ կառավարելու: Այնքան կուրանալ, որ մի ահագին թեմ արդէն յանցաւոր համարել և կարծել, որ յան-

ցաւորների մէջ ինքն ի՛նչ յանցանք էլ գործէ աչքի չպիտի ընկնի, ուստի և հանգիստ ու միամիտ սրտով է գնում, իւր տակը միտքը մէկին ու միւսին յայտնելով, ճիշտ հորթային զուարճութեամբ:

Ժողովուրդի դրութիւնը ցանկալի վիճակի հասցնելու, նորան անարժան առաջնորդներից ազատ պահելու, մնում է, որ Վեհափառ Հայրապետը իւր արձակած բազմաթիւ բարիքների հետ պատիժներ ևս արձակէ: Եթէ մի հերարխիայում, մի վարչութեան մէջ պատիժ չէ սահմանուած, այնտեղ այլ ևս աւելորդ կլինի ճշտութիւն, կարգապահութիւն, մեծի հնազանդութիւն և խիստ օրինապահութիւն սպասել: Ժողովուրդն ամենուրեք մէկ է: Ղարաբաղ, Երևան, Թիֆլիս, Գանձակ, Բագու, ամեն տեղ չարն էլ կայ, բարին էլ, բայց իսկական ժողովուրդը, միշտ մտաւորապէս և բարոյապէս հիւանդոտ է, միշտ բժշկի է կարօտ, դէպի լոյսը տանող առաջնորդի, պէտք է ուրեմն և միշտ նորան նկատի առնել:

Այն բժիշկն է միայն պիտանի, որ կարողանում է նախ իւր անձը բժշկել և ապա ձեռն ուրիշների վերայ դնել:

Այն շրջանակն, որի մէջ գտնւում է Շուշու ներկայ կոնսիստորիան՝ Գառնակերեանով և իւր ամբողջ կազմակերպութեամբ խախուտ է, շատ խախուտ:

Եթէ կոնսիստորիայի ծառայողներն էլ կամենան ցեխոտուած ռէպուտացիան փոքր ինչ մաքրել և իրանց յարգը դէթ մի թեթև կերպով մեղմացնել ժողովուրդի աչքում, պէտք է շատ-պէն օր առաջ հրաժարուել պաշտօնից, գնալ մի այլ գործով զբաղուել, մանաւանդ որ մեղք է հայ ժողովուրդը, և ամօթ է նորա շլինքին նստելը: Գառնակերեանն էլ ի հարկէ, եթէ իւր կամքով չհրաժարուեց, ժամանակը շատ շուտով կհասնի, որ նա առաջուայ պէս դարձեալ Ներսիսեան լճի նկինդը կդառնայ և առաւօտ-երեկոյ նորա ափերին ընկած մայթերը կմաշէ:

Մի քանի գծեր Բեսսարաբիայի, Խրիմի և Նոր-Նախիջևանի հայերի և հայ քահանաների կեանքից:

Բեսսարաբիայի Հայոց հոգևոր թեմը թէպէտ պատուի և դիրքի վերաբերմամբ սովորաբար առաջին տեղն է վայելում, բայց և այնպէս այդ թեմը ժողովուրդի և եկեղեցիների քանակութեան տեսակէտից Ռուսահայոց թեմերի շարքում ամենափոքրը պէտք է համարել:

Այդ թեմի միակ հայաշատ քաղաքը Նոր-Նախիջևանն է, որ ունի վեց եկեղեցի և մօտ հինգ հազար հայ բնակիչ: Մնացեալ քաղաքներում հայերը շատ չինչին թիւ են կազմում: Եկեղեցիների կողմից էլ շատ աղքատ են, եթէ չհաշուենք Թէոդոսեան, որ երկու հարիւր տուն հայ բնակիչ ունի, Հայոց չորս եկեղեցի, սակայն որոնց դռները վաղուց փակ են, և որոնք հիմնուել են դեռ այն ժամանակ, երբ այդ քաղաքում գտնուում էր վաթսուն հազար հայ:

Առաջնորդանիստ քաղաքը Քիշնևն է, որտեղ ապրում են ընդամենը երեսուն տուն հայ, որոնցից և ոչ մէկը չէ կարողանում հայերէն լեզուով գէթ մի հասարակ միտք յայտնել: Տիպերի գծագրութիւնն իսկ ամիսոփ վերցրած, հեռու են հայկական կոչուելուց:

Այդ հայերից ոմանք խօսում են մոլդաւերէն, ոմանք տաճկերէն: Շատերը նոցանից կալուածատէրեր են՝ հարուստներ, նոյն իսկ միլիոնատէրեր, իսկ մնացեալները արհեստաւորներ են և գլխաւորապէս սափրիչներ:

Քիշնևից դուրս՝ հայերից մէկ-մէկ ապրում են և Բեսսարաբիայի գիւղերում, Դէնստր գետի ափերին և գլխաւորապէս Գրիգորիոպոլ քաղաքում:

Զուրկ լինելով հայերէն լեզուից, չունենալով արժանաւոր քահանաներ կամ ուսուցիչներ, նորանք բոլորովին տեղեկութիւն չունեն իրանցից հեռու ապրող ազգակիցների մասին:

Քիշնևում կայ Հայոց ծխական ուսումնարան, սակայն շատ աննախանձելի վիճակի մէջ: Իսկ եկող-գնացող առաջնորդները, կալուածոց կառավարիչ վարդապետները, ի բաց առեալ իրանց համար կրած հոգսը, իրանց խալՁայական գրպանների ճոխացումը, աւելի գործ չեն ցոյց տուել:

Տեղոյն հայ հարուստներից շատերը, որոնց հարստութեան աղբիւրն էլ հայ վարդապետներն են եղել, բացի Կրեսոսեան կեանք վարելուց, առանձին միտք ու հոգս չունեն:

Զախարեանով Գրիգոր եպիսկոպոսի ազգականները մեծ հարստութիւն են վայելում և նորանց հարստութիւնն այդ իսկ եպիսկոպոսի թողածն է: Եպիսկոպոսի հարստութիւնն էլ հայ ժողովուրդի դառն քրտինքից է բղխել, բայց ի՞նչ է վայելում ժողովուրդը...

Քիշնևում մի հատ Հայոց եկեղեցի կայ, որ ուղիղն ասած, աւելի լաւ է այդպիսինն էլ չունենալ:

Իրաւ է ժողովուրդն ըստ երևոյթին սէր չունի դէպի եկեղեցին, բայց այդ հանգամանքը մասամբ էլ դորանով է իսկ բացատրւում: Ո՞չ ապաքէն դեղեցիկ արտաքինը, կանոնաւոր երգեցողութիւնը, արժանաւոր քահանաները՝ բոլորը միասին միայն կարող են ժողովուրդին եկեղեցի գրաւել:

Քիշնևում Հայոց երկու քահանաներ կան, երկուսն էլ կոնսիստորիայի անդամներ են: Ատենադպիրը պ. Կարապետ Օհանջանեան գործին ուշիմ և անձնուէր անձնաւորութիւն է: Պ. Օհանջանեան իւր բազմանդամ ընտանիքով վերաբնակուել է Քիշնև՝ Ալէքսանդրոպոլից և կարելի է ասել, որ այդտեղ միակ հայ ընտանիքն է, որտեղ կարելի ժամանակ անցկացնել ուղեղ հայավարչ: Այդտեղ է ապրում և մեր մանկավարժական հիմնարկութիւնների վեսերաններից մէկը՝ տիկին Հեղինէ Օհանջանեան:

Քիշնև է գտնւում Էջմիածնապատկան մեծածաւալ կալուածները, որի եկամուտը այժմ էլ թէև ոչ բաւարար, գոնէ առաջուայ ժամանակի հետ համեմատած շատ շօշափելի է:

Այդ պատմական կալուածների նախկին կառավարիչները ս. Էջմիածնին գրեթէ ոչ մի արդիւնք չեն ցոյց տուել: Եւ չէին կարող ցոյց տալ, վասն զի մի հրէշ մտել էր նորանց գրպանը ու կլանում էր կալուածների եկամուտները: Ագահո՜ւթիւն էր այդ սարսափելի հրէշի անունը:

Ոչ էպիզոտ, այլ բնորոշող մի գեղեցիկ դէպք են պատմում վիճակի կառավարիչներից մէկի մասին: Դա մի վարդապետ է

եղել, որ շատ հարստանալուց, դեղին ոսկուն սկսել էր մատների արանքով նայել: Մի անգամ այդ վարդապետը երկու հազար ռուբլի Թողնում է վառարանի գլխին, ինքը գնում է Մոսկուա՝ ժամանակ անցկացնելու, ֆէֆ անելու: Վերադարձին, ինչ էք կարծում, այդ գումարը դարձեալ նոյն տեղն է տեսնում:

—Տեսնում էք, ասում է վարդապետը, ոսկին էլ է մեղ սիրում, ինչպէս մենք նորան չսիրենք:

Մի ուրիշ վարդապետի մասին պատմում են, որ թէև հազարներն իւրացնում էր, բայց չէր պահում, բարեսիրտ տա-պո-ղնէրը կլանում էին բոլորը... Այս վարդապետի հեռանալով սաստիկ զայրացած է մի հրէայ ոսկերիչ, որի ասելով «էրեւլ հայը պո-ղէը իրանից մեծ քանակութեամբ ոսկեղէն ու ակնեղէն էր գնում և ի հարկէ աջ ու ձախ բաժանում...

Էլ կոմենտարիաներ հարկաւոր են...

Եւ այսպէս այդ անբախտ կալուածքը, որ ընկած է քաղաքի ամենանշանաւոր տեղը, որ արդիւնքի տեսակէտից մի ահագին աղբիւր է ս. Էջմիածնի համար, չկանոնաւորուից և մեծ վարդապետների գրպանները պարարտացնող և նորանց շռայլութեան մեծաքայլ միջոցներ տուող աղբիւր:

Բեսսարաբիայի թեմում եկեղեցիներն առհասարակ շատ ողորմելի դրութեան մէջ են: Քիշնևից մօտիկ Օդեսայում հայոց եկեղեցին փոքր ի շատէ պատուաւոր հայի աչքում արտասուք է շարժում: Նոյն թշուառ վիճակի մէջ են եկեղեցիները Բեսսարաբիայի միւս հայաբնակ քաղաքներում:

Իսկ ինչ վերաբերում է քահանաներին, ցաւ ի սիրտ շատ շատերի մասին պէտք է ասել, որ դեռ ֆայէ ոպէյն ո- գ-ոյն+ եբէ-ասյն էլ տեղն ու տեղը գարշանք են յարուցանում:

Մխիթարական կողմեր չկան Օդեսայի հայերի մէջ: Ինչ որ բարեգործական ընկերութիւն ունեն այնտեղ էլ գործողների մասին պէտք է ասել, որ Ռեպետիլովի խօսքը թէ *шумимъ, брамецъ, шумимъ* արդարացնելուց, ուրիշ այլ ոչ մի էական բան չունեն:

Աղքատին ցեցերը՝ ամեն լպստող պրեկնաշնէրը, սնանկացած աղաների կօշիկ սրբողներ՝ գլխաւորապէս զոկեր, նոր-նախիջևանցիներ, Թաւրիզեցիներ, այդտեղ էլ բոյն են դրել և թաթերը մեկնել դէպի ամեն մի սրբութիւն...

Մենք չգիտենք թէ տեղոյն հայ հարուստները, ոքպիսի խղճով են նայում իրանց եկեղեցոյն:

Խրիմի Թերակղզու հայերն էլ Բեսսարաբիայի հայոց վիճակին է պատկանում: Գլխաւոր քաղաքը Սիմֆերոպոլն է, ուր ապրում է նոյն երկրի նահանգապետը և ռուսաց հոգևոր վիճակի առաջնորդը:

Բնիկ հայերի թիւը Սիմֆերոպոլում 250 տուն է: Բացի այդ՝ այդտեղ ապրում են և մի քանի հարիւր տաճկահայեր: Ժողովուրդի գլխաւոր պարապմունքը առևտուրն է: Կան և մի քանի հատ նորաքիսայ համալսարանականներ, դորանցից և մի երկու անուանի խաչագողեր:

Մի հատ հայոց եկեղեցի կայ, երկու քահանայ և մի ուսումնարան:

Խրիմի մի քանի քաղաքներում հայերը դեռ եկեղեցի չունեն:

Մի մի հատ եկեղեցի կայ Ղարասուբազար, Եւպատորիայ, Օրաբազար, Կերչ, Մելիտոպոլ քաղաքներում, չորս եկեղեցի Թէոդոսիայում, մէկը հին Խրիմ գիւղում, իսկ Սեւաստոպոլի, Եալտայի պէս կեսրոններում, ուր և բաւական թուով հայեր են ապրում, տակաւին հայոց եկեղեցի չկայ:

Վերոյիշեալ քաղաքների եկեղեցիներն էլ առանց բացառութեան կարօտ են հիմնական վերանորոգութեան: Այդ եկեղեցիները մտնող հայը շուարում է, չէ իմանում որ ազգի եկեղեցին է մտել: Ո՞րքան աւելորդութիւններ, ո՞րքան ծիծաղելի արդ ու զարդ:

Կարծես ոչ մի ժամանակ այդ տեղերը չի այցելել հայաստանեայց եկեղեցու զէթ արտաքին ծէսերին հմուտ մի հայ հոգևոր առաջնորդ, ասում ենք կարծես չի մտել... որովհետև շատերն են մտել, բայց որոնց համար է ցաւ, ո՞վ է հոգալ կամենում, ո՞վ է մտածում...

Դէպի ազգային հաստատութիւնները, դէպի եկեղեցին ու ուսումնարանն ունեցած հակումները շատ չնչին են Խրիմի հայերի մէջ:

Անիից գաղթելով այդ երկիրը, երկար տարիների ընթացքում էլ սերունդէ սերունդ սերուելով, այսօր էլ միշտ նկատւում է նորանց բնաւորութեան նոյն պատմական առանձնայատկութիւնները. դոռոզ, շաղակրատ, մեծարան, ինքնապաստան, նախանձոտ, նենգամիտ, փառամոլ—յատկութիւններ, որ անբաժան տարր են խրիմցիներից և նոր-նախիջևանցիներից, այլապէս ասած Անին ա-էրակ պ-ոյ-ն-ոնէրէց:

Սիմֆերոպոլի միակ եկեղեցու զանգահարութիւնն ենք

լսում։ Մի շարք զանգակներ զողանջում են մի սարսափելի եղանակ, ինչ որ պարի եղանակ, որ ամոթ ենք համարում լսել։

Մտնում ենք եկեղեցի։

Բաց սեղանը փոքր ինչ վկայում է, որ մենք Հայոց եկեղեցում ենք, սակայն ի՞նչ պատկերներ են կախուած աջ ու ձախ պատերի վերայ, ի՞նչեր են ներկայացնում, ո՞րտեղից է առնուած նորա սիւժէն։

Այդ պատկերները ծածկուած են թալիսմաններով և զանազան զոյնի ժապաւէններով։

Դռներից մէկի ճակատին զետեղուած պատկերից մի կերպ եզրակացրինք, որ «Ս–ՊՂԷ» նկարիչը կամեցել է ներկայացնել Փրկչի մուտքը Երուսաղէմ։

—Բայց միթէ Փրկիչը նապաստակի վերայ է մտել Երուսաղէմ։ Հարցնում եմ մօտս կանգնած մի պարոնից։

—Ի՞նչ նապաստակ։

—Չէ՞ք տեսնում, նկարն այդպէս է ներկայացնում։

—Նապաստակ չէ, ջանմ, աւանակ է։

Լռեցի։ Ինձ ու ինձ մտածում եմ. կամ Խրիմեցիք նապաստակին աւանակ են անուանում, կամ Խրիմի աւանակները նապաստակից են սերուած, որովհետև նկարիչն էլ այդպէս է ներկայացրել։

Կանանց դասը, որ եկեղեցու ամբողջ աջ կողմն է յատկացրուած, աշխատել են արևմտեան եկեղեցու զոյն տալ։ Ամեն մի կին իւր հանդստութեան համար մի աթոռ է դրել այդտեղ։ Աթոռներն էլ այնքան բազմազան են, որ կարծես եկեղեցու ամբողջ աջ կողմը աթոռների ցուցահանդէս է սարքուած։

Եկեղեցում շինուած է հարուստ աղօթաւորների համար գուստների պահարան։ Հարուստ պսակուողների համար էլ առանձին վանդակամած — կենդանաբանական այգիներում շինուած վանդակների ձևով... Ապա առևտրական տների օրինակով եկեղեցում դրուած է մի մեծ, երկաթէ դրամարկղ, սեղանաւորի մի մեծ արկղ էլ մոմ վաճառելու համար և այլն և այլն։ Մի խօսքով կշեռքն ու արշինն է պակաս...

Եւ դեռ մեզ ուզում են հաւատացնել, որ խաչագողները, աֆերիստները չեն վխտում մեր միակ ժառանգութիւն հիմնարկութիւնների մէջ, որ այլասեռումը հսկայական քայլեր չի անում։ Ամեն տեղ ուր ոտք էք դնում ձեր առաջ մի մարմնացած «ՊՊՊ–ի» է կանգնած, մի քաւոր Պետրոս, մի Խլեոտակով։ Հասարակական պարագիտները մեր ժողովուրդի մէջ

այնքան շատացել են, որ օր-ցերեկով խաչագողութեամբ պարապողը աղա է ընդունւում, զանազան հոգաբարձութիւնների, մինչև իսկ եկեղեցական խորհրդների անդամ։

Գլուխ են խոնարհում երէկուայ աւազակին, սնանկին, այն սնանկին, որ աւազակից վատթար ապրել է միշտ ուրիշների քրտինքով, ուրիշների արտասուքով, իսկ դառն հալածանք են մղում ժողովուրդի իսկական սրտացաւ գործիչների դէմ։

Եւ դեռ այլասեռումն վիճելի է...

Սիմիերոպոլի Աւագ քահանան՝ տէր-Օգսենտիոս Քոպչակիձեանց փորձուած մարդ է, խոհուն և ուղիղ քահանային վայել սքեմով, համեստ բնաւորութեան տէր, մտաւորապէս էլ ոչ պակաս զարգացողութեամբ և հարկ եղածին՝ ոյժի չափ բարի գործերից յետ չմնացող, ստանում է լրագիր, ամսագիր, հետաքրքիր է մեր առանին գործերի վերաբերմամբ, իսկ դորանք մոսիթարական երևոյթներ են, որոնք երաշ են համարւում Խրիմի և Նոր-Նախիջևանի շատ և շատ քահանաների համար։

Իւր բարեբարոյ բնաւորութեամբ, քահանային վայելուչ սարասով լաւերի շարքում պէտք է դնել և կերչի տէր-Օգսենտիոս քահանային։ Տէր հօր միայն պէտք է նկատել, որ խստիւ հետևէ Հայաստանեայց եկեղեցու ծէսերին։ Օրինակ՝ Հայաստանեայց եկեղեցու ծէսից դուրս են այն մեծածաւալ խաչկալները, որ շինուած են իրանց եկեղեցում և որոնց ծայրերը հասնում են մինչև զգեստաւորուելու խորանները։

Հայոց Առաքելական եկեղեցու բեմն ունի եօթն աստիճան, իսկ սեղանը պէտք է շինուի չորս աստիճանով։ Սեղանի վերայ պէտք է լինի կամ Փրկչի կամ Տիրամօր պատկերը, սակայն մանուկ Յիսուսը դրկում։ Աւելորդ են ձողերի վերայ ցցած և եկեղեցում կանգնեցրած խաչուառները, աւելորդ և աջ ու ձախ պատերին շարուած անիմաստ պատկերները։

Այդպիսով եկեղեցին կորցնում է իւր շուքը, իսկ նորա շուքը արտաքին պարզութեան և ներքին վեհ ոգու մէջ է։

Առհասարակ Խրիմի Հայոց եկեղեցիները ողբալի վիճակի մէջ են։ Հազարաւոր նորմուծութիւնները նսեմացրել են դարերով պահպանուած փառքը։

Գործող ձեռք է հարկաւոր, անկեղծ սէր դէպի մայրենի եկեղեցին, դէպի նախնեաց վեհապանծ ժառանգութիւնը։

Շատ ծանր տպաւորութիւն է թողնում և Մելիտոպոլի եկեղեցին։ Անթիւ են նորա մէջ թափուած, կուտակուած յոյժ տգեղ նորութիւնները։

Թէոդոսիայի եկեղեցիների գոնէ յատակագիծը, այլ և հինաւուրց զարդերը հայկական են, սակայն նորանք էլ խառնուել են մի շարք նորութիւնների հետ և իսպառ կորցրել իրանց հետքը: Այդտեղ ամենքից շատ զզուելի են այն անթիւ թալիսմանները, որոնցով զարդարուած են այս և այն պատկերները:

Զարմանալի է... միթէ Մաշտոց չունե՞ն այդ քահանաները, միթէ երբ և իցէ չե՞ն կարդում նորանք մեր եկեղեցու անցեալի մասին և չեն հետաքրքրուում հէնց նորա անցեալով: Միթէ յիրաւի նորանք ամօթն ու խիղճը սառցրել են և փարաջան հագել միմիայն ուտելու, ըմպելու, զկանայս առնելու և...

Սուրբ Սարգիս եկեղեցու պատկերների մեծ թիւը պատկանում է մեծահռչակ Այվազովսկու վրձինին, որոնք այսօր անմառունչ վկաներ են՝ հանձարեղ նկարչի դէպ իւր մայրենի եկեղեցին ունեցած սիրոյն: Այդ իսկ եկեղեցու բակումն է ամփոփուած մեծահանճար ծովանկարի մարմինը:

Խրիմում, Բեսսարաբիայում և Նոր-Նախիջևանում ամենուրեք հայոց եկեղեցիների զանգահարութիւնը միատեսակ է և ամեն տեղ նոյն խայտառակ ղղանջն է, նոյն ֆէդենկայի և ո-ղբ-նդաբայի եղանակը:

Մենք սպասում ենք տեսնել եկեղեցին իւր նախնական պարզ, անպաճոյճ, սակայն վեհ և խորհրդաւոր դրութեան մէջ: Ոչ միայն այդպիսի զանգահարութիւնն այլ պէտք է միանգամայն վերացնել դռներով խաչկալները, որոնք ոչ մի բանի տեղ չեն ծառայում և ոչ իսկ մի միտք ունեն: Զողերի ծայրերին ցցած խաչուառները իբրև շարժական իրերի չի կարելի և չի էլ պաշտամ տաճարի մէջ կանգնեցնել: Նորանց տեղը խորաններն են, նորանք գործ են ածւում միայն եկեղեցական հանդէսների ժամանակ: Վերջապէս բաւական չէ՞ միթէ եկեղեցին զարդարել երեք պատկերով: Մէկը դնել սեղանի վերայ, որ պիտի ներկայացնէ Ս. Աստուածամայրը Փրկիչ մանուկը գրկում, կամ միմիայն Փրկիչը հաստատուած տարիքում, ապա երկուսը տաճարի մէջ, որոնցից մէկն անպատճառ պիտի ներկայացնէ Հայաստանեայց Առաքելական և ուղղափառ եկեղեցու Մեծ Լուսաւորչի պատկերը, իսկ միւսն այն որբոյ պատկերը, որի անուամբ շինուած է եկեղեցին:

Նոր-Նախիջևանի աւագ եկեղեցին մտնողը կարծում է պատկերահանդէսի դահլիճ է մտել: Եկեղեցու յատակագիծը հայկական չէ, իսկ այս և այն անկիւնների խայտաբղէտ զարդարանքները միանգամայն փչացնում են ջերմեռանդ հայի ան-

կեղծ հաւատը: Սեղանի վարագոյրը ծածկւում է և ձեր առաջ փռւում է մի գեղեցիկ «ալանի» վարագոյր, զանազան ծէպծէպաներով, փնջերով ու ծոպերով: Ապա այս և այն կողմերում դարձեալ ձողերով խաչուառները, պղնձէ պատկերները, իկոնները, քահանաների ծիծաղաշարժ սուրջառներ և այլն և այլն: Նոյն արտաքինն ունեն այդ քաղաքի և մեացած եկեղեցիները՝ նոյն պատկերահանդէսը, նոյն անճոռնի աւելորդութիւնները: Ոչ մի տեղ էլ բեմը չէ շինուած եօթն աստիճանի վերայ և ոչ մի տեղ սեղանը չէ զարդարուած պատշաճաւոր շքով:

Նոր-Նախիջևանի քահանաների մասին ոչ մի լիազօրութիւն չունենք գէթ մի փոքր նպաստաւոր յատկութիւն յայտնելու: Աւագագոյնն է ոմն Զարիփեան — սրտակից բարեկամը տխրանուն Մինաս Պալասանեանի — այն մարմնացած հերոսպատգի, որի ձակատին «Приаз. Кр.» թերթի աշխատակից պ. Գ. Զ. մի անուն դրոշմեց, որ մենք զարշում ենք այստեղ յիշելու, սակայն ոչն անջնջելի մնաց:

Ցաւալին այն է, որ այդ Զարիփեանները կարողանում են ճողոպրել ամեն մի ոստայնից:

Իսկ աւելի ցաւալին հոգևոր իշխանութեան անտարբերութիւնն է:

Մեր խորին համոզմունքով Վեհափառ Կաթուղիկոսը մի ժիր գործունեայ վարդապետի գործակալ պիտի նշանակէ Խրիմի թերակղզու համար, որ շրջէ ամեն կողմ, քարոզէ, անսայ ժողովուրդի պահանջներին, բարեկարգէ ողորմելի դրութեան հասած եկեղեցիները և սանձահարէ իւր կոչումից փախած քահանաներին:

Եալտայում չկայ հայոց եկեղեցի, իսկ այդտեղ ապրում են յիսուն տուն մշտական հայ բնակիչ, չորս հարիւրի չափ բանուորներ, իսկ ամառ-ամեռ օդից ու ջրից օգտուելու եկողների թիւը շատ մեծ է: Այս բոլորը նկատի առնելով, անտարակոյս կարևոր է Եալտայում մի վայելուչ եկեղեցի կանգնել: Իրաւ է, այժմ կայ մի աղօթատուն, բայց այդ չէ գոհացնում ժամանակի պահանջները: Մի բաղդախնդիր քահանայ էլ գաղթականներից յետ մնացած ընկել է այդտեղ և իւր մի շարք գարշելի արարքներով միանգամայն զզուացրել ժողովուրդին: Բանն այնտեղ է հասել, որ մի խաբեբայ լիւտերական հայ առել է այդ քահանայից աղօթատան իրաւունքները և այն աստիճան յանդգնել, որ աղօթատան մէջ իւր պէռոքլով կանգնած՝ աւետարան է կարդում ու քարոզ խօսում:

Եւ այդ հազար թոկից փախած կրօնափոխը, որ մի շարք խաչագողութիւնների և աֆերիստութիւնների համար երկար ժամակներով փտել է Թիֆլիզի Մետեխի բանտում, այդտեղ կծկուել է իւր քուրձի ծալքերում և մինչև անգամ, միամիտների մէջ, ուր հարկ է համարում, լուսաւորչական է ներկայացնում իրան ու կամաց-կամաց զանազան սրիկայութիւններով ձիգ թափում լկաի հաւատորսութիւնն առաջ տանելու, հաճոյանալու ամերիկացի թեթևամիտ միսիոնարներին և ապա շոշափելու նորանց գրպանները: Եւ այդպիսի սրիկաները իրանց ոլսանան առաջ են տանում Եալտայի փալաս քահանայի և երկու ամսան լպստող աղա դարձած գեագների շնորհիւ:

Օրինակ՝ մենք այդպիսի աղանէրից մէկի հետ խօսում ենք, զարշանք ենք յայտնում այդ քահանայի և այդ խաչագող հաւատափոխի վերաբերմամբ, նա, այդ աղան, որ մի բարձր բոյով մարդ է, նօսր, սպիտակ մօրուքով, միշտ կարմիր դէմքով և ամառ-ձմեռ մորթէ գլխարկով, պատասխանում է.

—Վա՜հ, ի՞նչ իս խօսում: ասում է նա. զուրթ է միր էս տէրտէրը մինձ ուսում չունի, համա խիստ լաւ հասկանում է, ախր չի՞ս տեսնում ինչ թաւուր շարական է կարդում, իս խամ ամեն ինչ լաւ իմ հասկանում, համա էնէ վուրէ անգիր չիմ գիտի, մոռացիլ իմ:

—Ո՞րն է տէրտէրի լաւ կողմը:

—Իս ի՞նչ գիտիմ, էնքանը վուր սաղմուսն ու շարականը լաւ իմանայ, ուրիշ ի՞նչ կուզիս:

Եալտայում—Կայսերական ամարանոցում, ունենալ միայն այնպէս քահանայ «Վ-ը Ղ-ի՝ աղամոն ա՝ շարականը լաւ գիտենայ»: Մ՞խ, քօռութի՜ւն, քօռութի՜ւն...

Սակայն ուրախալի է տեսնել, որ Եալտայում ապրող հարիւրաւոր տաճկահայերը եկեղեցու խնդիրը դարձրել են առօրեայ խնդիր—հաւասար հացի խնդրի հետ:

Պէտք է տեսնել դորանց առաջաւորներին՝ Յակոբ Տէր-Սարգսեանին, Կարապետ Միրզէլեանին և Յակոբ Սիլվէեանին, որոնք ոչ մի ջանք չեն խնայում այդ միտքն իրագործելու, որոնք և ամեն կերպ ձիգ են թափում եկեղեցի կառուցանել, արժանաւոր քահանայ, ապա ուսումնարան ունենալ:

Պէտք է տեսնել ծերունազարդ Յակոբ Տէր-Սարգսեանին, որին և յանձնուած է եկեղեցու մատեանները, թէ օրպիսի եռանդով, որպիսի տոկունութեամբ աշխատում է այդ գործի

համար, միշտ այս և միւսի դռները բաղխում, միշտ ամենքին նոյն խնդիրը, նոյն աղերսը յայտնում: Եւ այդպէս անում է շատ և շատ անգամ իւր օրուայ վաստակից զրկուելով, այլ և հազար մի անախորժ դժկամութիւններ լսելով: Չէ՞ որ յայտնի պտուղներ են հայ աղանները:

Բայց մեր կարծիքով, քանի որ այդտեղ արդէն աղօթատուն կայ, պէտք է աշխատել նախ մի արժանաւոր քահանայ ունենալ: Ժիր, աչալուրջ, փոքր ինչ էլ ճարտար լեզու ունեցող քահանան միայն կարող է այդ միևնոյն Յակոբ Տէր-Սարգսեանցի և այլոց աջակցութեամբ եկեղեցու կառուցման գործն առաջ տանել:

Այդպիսի հանգամանքներն ենք նկատի առել, որ այսօր հոգևոր իշխանութեան առաջարկում ենք Խրիմի թերակղզու համար մի շրջիկ գործակալ—վարդապետ նշանակել: Ժամանակը հասունացել է միայն կենդանի սիրտ ունեցող մարդիկ են կարող գործ կատարել:

Մի բարեկարգիչ առանձնապէս պէտք է նշանակել բուն Բեսսարաբիայի համար, իրաւունք տալ նաև գնալ Լեհաստան, որի անկիւններում քիչ հայեր չեն ապրում:

Մի ուրիշին պէտք է նշանակել Խարկովից սկսած մինչև Տագանրոգ ընկած գծի վերայ, ուր անթիւ հայեր կան, գլխաւորապէս Հին-Նախիջանի գաւառից:

Այս շրջիկ հովիւները եթէ օժտուած էլ լինեն փոքր ի շատէ հոգևորական ընդունակութիւններով, շատ գործ կկատարեն, վասն զի կատարելու գործ շատ կայ:

Հունձք բազում են և մշակք սակաւ:

Պէտք է նկատի առնել, որ այդպիսի բարեկարգիչների հետ չպիտի հաշտուին միմիայն քահանաները, որովհետև նորանց ամենևին ձեռնտու չէ ժողովուրդի ինքնաճանաչութիւնը: Չէ՞ որ թանձր խաւարի մէջ հեշտ է վխտալ, հեշտ է աջ ու ձախ խոտորել, ինչպէս ձկնորսի համար աւելի հեշտ է պղտոր ջրերում ձուկ որսալ:

Թէ նոր-Նախիջևանցին թէ խրիմցին կարծես ընտելացել են իրանց քահանաներին, բայց ընդհանուր առմամբ այդ քահանաները մի-մի գղերներ են ժողովուրդի մէջքին նստած, մի-մի անտանելի բեռներ:

Խարկովի հայերը առ այժմ բախտաւոր են: Սրապիոն քահանայ Սամուէլեանը խարկովցիների համար առանձին մխիթարութիւն է: Մնում է, որ Խարկովի հայերն էլ աշխատեն

արժանաւորին գնահատել, ծուարուել մի թեւի տակ և եկեղեցին պայծառ պահել հայրենիքից այդ հեռու անկիւնում:

Բախտաւոր են նոյնպէս և Լուգանսկ քաղաքի հայերը: Ներսէս քահանայ Հերթեւեանը յիրաւի օժտուած է բազմաթիւ արժանաւորութիւններով, թէպէտ և պէտք է չմոռանալ, որ այսպիսի մարդիկ հեշտութեամբ էլ չեն կարող խմորուել ժողովուրդի հետ, վասն զի խեղճ ժողովուրդի երասանն իրանց ձեռն են առել մի քանի աղանէր, իսկ հօ յայտնի են հայ աղաները... Զէ՞ որ նորանց մեծագոյն մասը երէկուայ ման լպաստող ու կօշիկներ մաքրողներն են:

Լուգանսկի հայ հասարակութեան մէջ են ընկել մի շարք բախտախնդիրներ, սրիկաներ, խաչագողեր,—Մեղրիից, Սալմասից. որոնք և իրանց ստոր թակարդներով ցեխոտում են ամեն մի սրբութիւն:

Մեղրեցի խաչագողերից մէկը զանազան աֆերէսպոնդենտներ բոյն է դրել այդտեղ, մի թաբախ խնծոր առել գլխին, իւր համար պարապմունք շինել, սակայն տեսէք, որ այդպիսի սրիկաները շատ անգամ էլ կարողանում են պղտորել ժողովուրդի միտքը և երկպառակութիւն ձգել ժողովուրդի և քահանայի մէջ: Նորանք ունեն և մի սարսափելի զէնք.—մատնել: Եւ մատնել ում և կամենան, այն էլ ամեն տեսակ սուտ և ստոր ամբաստանութիւններով: Համբակներից մէկը, դիցուք մի Աբրահամեան, մի Քիրիշչեան աղա է ձեւանում, քիթն ամեն բանի մէջ խրում, ազդաւի պէս կարծելով, որ ուրիշները չգիտեն թէ ինչպէս էր նա երէկ այս և այն աղայի ման լպաստում, կօշիկները սրբում, երկու մատն էլ մերթ ընդ մերթ մութ տեղերում նորա գրպանը կոխում:

Հին-Նախիջևանից դիցուք եկել է այդտեղ մի բախտախնդիրը, մի խաբեբան, մի իբր լայն բողազ ունեցող Աբրահամեան եկել է ողորմութիւն հաւաքելու, տեսէք թէ Մեղրեցի խաչագողը, Քիրիշչեանների պէս ֆեսոսագեսպոնդենտները ինչ ջրեր են պղտորում:

Եւ այդպիսիները արժանաւոր քահանաների հետ տեղի են տալիս մի ծանր ֆէակցիայի, որ և ունենում է իւր տգեղ հետևանքը:

Պէտք է ասել, որ դորանց երես տուողը այդ երկրացի քահանաներն են եղել, վասն զի իրանք էլ միշտ պարել նորանց ղուռնայի եղանակով:

Ինչպէս ասացինք, Խրիմի գլխաւոր քաղաքը Սիմֆերոպոլն է, հայերի մեծ թիւն այդտեղ է: Այլասեռումն այդտեղ աչքի է ընկնում ամեն դասակարգի մէջ: Համալսարանականներից շատերը, ի բաց առեալ իրանց մասնագիտութիւնը, մաքերն այլ կողմեր չեն հասցրել: Տեղեկութիւն չունեն նորանք՝ ոչ իրանց ազգի կամ եկեղեցու անցեալից, ոչ ներկայից, հայկական խնդրով էլ չեն հետաքրքրւում: Իւրաքանչիւրը նորանցից ինքն իրան շատ մեծ է երևակայում, իսկ նախանձը, նենգամտութիւնը անբաժան տարբեր են բոլորի սրտերից: Ահարոնի հորթը նորանց իդէալն է. և դեղին ոսկու սիրոյն, հարկ եղած ժամանակ՝ չեն քաշւում զօրեղի առաջ քծնել շոյել, շողոքորթել, ոտք լիզել:

Մեծամտութիւնը նորանցից ստորին, մինչև իսկ նշաւակուած օձախի արդիւնք են. ստուած, դաստիարակուած սարկաստութեան, փառամոլութեան և մեծաղաղաշտութեան իդէալներով:

Տեսում էք երէկուայ մուրացկանը, դռներն ընկած, վիզը ձկած, ողորմութեամբ ապրող մի Կիրակոսի, կամ մի Սեղբոսի՝ ման լպստած աղան ինչ-ինչ հանգամանքներով կարողացել է գլուխ բարձրացնել և, որ առաւելն է, մի իւղոտ աղջկայ վերայ պսակուել ու կնոջ փողերով հրապարակ դալ, ձակատ բաց անել, մարդ դառնալ, մարդկանց շարքում նստել:

Ամբարտաւանութեան հօ չափ չկայ և ճիշտ ամբարտաւանութեան, ինքնապաստանութեան հոգին, որ նկատւում է նոյն իսկ ստորին դասակարգի մէջ, յիշեցնում է մեղ Սողոմոնի պատկերն Անին:

Միակ հայկական հաստատութիւնը եկեղեցին է և ծխական ուսումնարանը: Եկեղեցու մասին արդէն բաւական ենք համարում խօսել:

Ուսումնարանը Սիմֆերոպոլում, մանաւանդ տղայոց բաժինը, ոչ մի պտղաբեր նպատակի չի ծառայում: Խոշորացոյցով եթէ նայէք այդ ուսումնարանին, կտեսնէք, որ դա Զինաստանի փոքրագոյն մոդելն է: Խաւարի պատերն այնքան բարձր են, որ ոչ մի մտաւոր լոյսի շառաւիղ չի յանդգնիլ թափանցելու այդտեղ յաճախող երեխաների գլուխը: Տեսուչը՝ ոմն Բարիեան՝ Խալերի հին-հին սաներից՝ յիշեցնում է մեղ Բաֆֆիի տէր-Թօդիկը,—տարբերութիւնը նորա մէջն է միայն, որ տէր-Թօդիկը սովորացրել է մինդարի վերայ նստած, իսկ այս Բարիեան տեսուչը բախտ ունի աթոռի նստելու:

ՀԷՅ գիտի, անտէր ժամանակ, ՀԷՅ։

Շատերն՝ այդտեղի հայերից ամուսնացած են օտար դաւանութեանց պատկանող կանանց հետ։ Եւ նրանց առնչութիւնն արդէն ընդհատուած պիտի համարել մայրենի եկեղեցուց, սակայն այդպիսիներն էլ ձեռք չեն վերցնում հայոց այն հաստատութիւններից, որոնց մէջ գրամարկղ կայ, կամ որոնց հարկի տակ միջոց կունենան միամիտների աչքում ազգասիրական փոշի փչելու։

Սիմֆերոպոլի մասին սոյն մեր համառօտ գիտողութիւններն անելուց, չմոռանանք յիշել, որ այդտեղ է ապրում և աղնիւ, անմոռանալի Գէորգ Դոդոխեանը, անմահ ԺԷԺԷՌՆԱԿ ԺԷԺԷՌՆԱԿԻ ծերունազարդ հեղինակը։

Այդտեղ է և մեծանուն Գաբրիէլ քահանայ Պատկանեանի դուստր ու անմահ Գամառ-Քաթիպայի քոյր տիկին Վառվառէ Գարագաշեան, որ իւր աղնիւ բնաւորութեամբ, խելացի դատողութիւններով եղակի երևոյթ է Սիմֆերոպոլում։

Աղնուաշուք տիկինը իւր ամուսնու մահից յետոյ ստիպուած է լինում կառավարել իրանց սեպհական կալուածքը՝ մօտ տասներկու հազար դեսեատին տարածութեամբ։ Եւ նա իւր վարչական հմտութիւններով հիացնում է շատ և շատ կալուածատէրերի ու կառավարիչների։

Մօտ ծանօթանալով մեծարգոյ տիկնոջը և լաւ ուսումնասիրելով նորա մասին լսածս զովասանքները, մտածում էի թէ ի՞նչ բախտաւորութիւն կլինի, եթէ սուրբ էջմիածնի կալուածների կառավարութիւնը գէթ մի հինգ տարով յանձնուի տիկին Վառվառէ Գարագաշեանին։

Հարիւրաւոր տաճկահայերի հետ Սիմֆերոպոլում ապրում է և տաճկահպատակ զօքտոր Մարտիրոս Ղըլըթջեան, որ իւր անկեղծ անձնուիրութեամբ գրաւել է ընդհանուրի սէրը և որ յիրաւի ամեն րոպէ պատրաստակամ ձեռք է մեկնած դէպի բոլոր թշուառները, ևս առաւել դէպի հիւծուած, մաշուած, հիւանդ գաղթականները։

Ղըլըթջեան Խրիմի բոլոր տաճկահայերի սիրելին է։ Սիմֆերոպոլում տաճկահայերից կան և մի շարք աղնիւ երիտասարդներ՝ Համբարձում Փաշալեան և այլք, որոնք մի-մի մխիթարութիւններ են իրանց բախտաղուրկ, արտասուաթոր եղբայրակիցների համար։

Եղբայրակիցներին այլասիրա խրիմցին մտաների արանքով է նայում։ Կովկասի հայերը նորանց համար գ՞ա՞ֆէցիներ են, տաճկահայերը գանգալիներ, իսկ իրանք... ուղիղն ասած՝ Աստուած էլ կժուարանայ դորանց համար մի այլ անուն ստեղծել։

Առհասարակ մխիթարականը Խրիմում տաճկահայերի դէպի աղգային հաստատութիւնները պահպանուած անկեղծ և անարատ զգացմունքներն են։ Եկեղեցին հօ, որ միակ գործոնն է հայ եղբայրութեան ամրութեան, այդ մարդկանց համար միշտ մտքի առարկայ է։

Եալտայում մենք տեսանք պ. Խաչիկ Պետրոսեանին և սորա նման մի շարք ոչ շատ հարուստ անձնաւորութիւնների, որոնք ամեն րոպէ և ամենայն սիրով պատրաստ են անխնայ ձեռք մեկնել դէպի ամեն մի բարենպատակ հաստատութիւն։

Ի հարկէ Խրիմում իրանցից էլ կան յարգելի բացառութիւններ, բայց մեր խօսքը մեծամասնութեան մասին է։ Կան երիտասարդներ, լաւ գաղափարներով տոգորուած, սակայն դորանց թիւը մի ձեռի մատների վերայ չի լրանալ։

Խրիմի հայերի պարապմունքն ընդհանրապէս առևտուրն է։ Առևտրով են պարապում թէ Խրիմի բոլոր քաղաքներում և թէ երկաթուղու այս և այն գծերին ընկած կայարաններում ու նորանց կից աւաններում։

Նոր-Նախիջևանի հայերը հօ գերազանցում են բոլորին։

Գամառ-Քաթիպան բաւական չափով անմահացրել է նորանց վարքն ու բարքը, նորանց ներքինն ու արտաքինը նկարագրելով՝ թէ ոտանաւոր, թէ արձակ ձևով։

Ցիրաւի այդտեղ մխիթարական ոչինչ չի կարելի որոնել։

Ճիշտ է, նորանք ունեն և սեմինարիա և զանազան բարենպատակ ընկերութիւններ, բայց և ոչ մէկն այդ բոլորից չէ կանգնած իւր կոչման բարձրութեան վերայ։

Սեմինարիան ոչինչ չի արտադրում։ Թողնենք, որ այդտեղ աւարտող աշակերտներից մէկ-մէկ կգտնուեն անհատական ձիրքով ու շնորհքով օժտուածները, բայց ընդհանուր առմամբ նա ցանկալի պտուղներ տալուց շատ հեռու է, միանգամայն անզօր։

Ուսուցիչների մէջ կան մի երկու բացառութիւններ, սակայն մեծամասնութեան մասին լռելն աւելի պատուաբեր ենք համարում։ Իսկ տեսուչն ոմն Գ. Զարխեան միանգամայն պատուհաս է այդ անբախտ հիմնարկութեան գլխին։

Այդ պարոնը դեռ հանդուցեալ Մակար Կաթուղիկոսի օրոք նշանակուում է տեսչի պաշտօնակատար, ապա մի քանի անգամ առաջարկուում է Կաթուղիկոսին՝ այդ պաշտօնի մէջ հաստատելու։ Հանդուցեալը միշտ մերժում էր։ Եւ խնամիների շնորհիւ այդ պատուհասը տեսչի պաշտօնակատարի աթոռը բաղմում է ուղիղ տասն ու երեք չարաբաստիկ տարիներ և, ինչ ասել է հարկաւոր, որ այդպիսիների շնորհիւ տուժում է դպրանոցը թէ բարոյապէս, թէ նոյն իսկ նիւթապէս։

Եւ դպրանոցի ու ժողովրդի վերայ ծանրացած այդ անտանելի բեռը խնամիների պահպանութեամբ հասնում է մինչև 1895 թուականը։

Այդ ժամանակ Նոր-Նախիջևան էր գնացել Վեհ. Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթուղիկոսը։ Ահա այդ միջոցին խորամանկ տեսուչն ու ոչ պակաս խորամանկ խնամիները, լաւ իմանալով Հայրիկեան ծայրից դուրս բարի սիրտը, գնում, ոտքերն են ընկնում և աղի արտասուքով աղաչում, որ այդ անկիւլեն հաստատէ իւր պաշտօնի մէջ։ Եւ գնչուների նման լեզու են բանեցնում, առարկելով, որ Գալուստը մեղք է, երեխաներ շատ ունի, այդ հիմնարկութիւնից դուրս էլ ոչ մի տեղ չի կարող մտնել, քաղցած կմնայ, փողոցները կընկնի և որ... որ... Ի հարկէ պաշտօնակատարի արտասուքն էլ արդէն շողացել է բաղումոցորմ Վեհի առաջ և այսպէս ու այնպէս, վերջապէս ի սուզ և ի կոծ հարիւրաւոր աշակերտների, այդ պատուհասը ամրանում է իւր տեղը և բարերար ազգի մէջքին հանգիստ կերպով մնկնում։

Նոր-Նախիջևանում կան մի քանի բարեգործական ընկերութիւններ, որոնք կարծես գոյութիւն են վաստակել միմիայն ժողովուրդի առածը հաստատելու, թէ՝ Շահէն-դաղն էաղը վար...

Կան երկու օրիորդաց ուսումնարաններ՝ Գոգոյեան, որից աղայութիւն կլինի արդիւնք սպասելը, ապա փոքր ինչ լաւ հիմունքների վերայ դրած Ս. Հռիփսիմեան ուսումնարանը, որ կանգնել է Սուքիաս Ալբ-եպիսկոպոսը, դեռ այդտեղ յաջորդի պաշտօնում գտնուած ժամանակ։

Նոր-Նախիջևանն անսպառ կռիւների և անվերջ կուսակցական պայքարների բոյն է։ Նալբանդեանի օրերից սկսած, Խալեբեան—Հայրապետեան կռիւները պարբերաբար հասել են մինչև մեր օրերը, երբ ամեն ամիս, ամեն մի կռիւը մի նոր կռիւ է ծնում և իւրաքանչիւր կուսակցութիւն մի նոր կուսակցութիւն վիժում։

Եւ միթէ կպակասի՞...

Սակայն այդ Աստուածախնամ քաղաքում ոչ մի կռիւ, ոչ մի աղմուկ այն աստիճան ծայրահեղ խայտառակութեան չէր հասել, որպիսին տեղի ունեցաւ տխրահռչակ Մինաս Պալապանեանի օրոք։

Հրապարակ եկան մի բուռն երիտասարդներ, որոնք իրաւամբ նշաւակեցին այդ խայտառակութիւնը, բայց ման լպրստողներ էլ գտնուեցան, որ կախուեցին այդ Պալապանեանների փէշերից։ Սակայն թողնենք այդ սողուններին...

Կան այդտեղ անձնաւորութիւններ, որոնց միակ զէնքը մատնութիւն է։ Տեսնում էք երէկուայ բարեկամութիւն ցոյց տուածին, սեղանակից դարձածին—այսօր մատնել են չարերի ձեռը և ծանր վտանգի ենթարկել նորա կեանքը։

Հասարակութեան, դրականութեան, դպրանոցին նուիրուած անկեղծ մարդկանց վերայ վագրի պէս նետուելը առանձին հրճուանք է այդտեղ ապրող մի շարք մարդկանց համար։

Շատերը տակաւին չեն մոռացել և չեն կարող մոռանալ դաղանասիրտ Գ. Բ.-ի վարմունքը։ Այն արիւնռուշտը, որ հայոց լրագրերից մէկի մի երիտասարդ աշխատակցի՝ լկտի և ստոր հոգով մատնեց ոստիկանութեան ձեռը իբրև յեղափոխական, իբրև ժողովուրդի մտքերը տակն ու վրայ անողի, ապա մի նենգ հնարով միջոց չտուաւ նորան մինչև իսկ իւր իրերը պահպանելու—իրեր, որոնց մեծ մասը գրական անմեղ աշխատութիւններ էին։ Դեռ այդ հրէշը Սադայէլի հրճուանքով շատերի մօտ էլ բացականչում է. «տեսա՞ք, նա համարձակուեց ինձ նկատողութիւն անել և ես ամբողջովին կլանեցի նորան»։

Բահալի ոգին տակաւին վառ է այդպիսիների սրտում և գիտենք թէ ինչ փշերի վերայ են նստած մի շարք ինտելիգենտ երիտասարդներ, որոնց համար մտածողութեան առարկաներ են. ժողովուրդն ու եկեղեցին, հասարակութիւնն ու հասարակական հիմնարկութիւնները։

Այդտեղ էլ են բոյն դրել և իրանց «Ֆրանգ» համարող ցեղերից ոմանք։ Մենք պատահեցինք մի պարոնի, շէկ մօրուսով, ակնոցներով, ուղիղ ֆաբրիկ-ֆի դիմակով, որ իւր համար տեղ է արել այս և այն ընտանիքներում ուսուցչական պաշտօն վարելով։

Եւ եղուիաների այդ խայտառակ վիժմունքը, այդ ափերիսաը միամիտներին պատմում է, որ կաթոլիք հայերի պատրիարքը (Զեաքի փաշայից կատաղի՝ հայութեան արիւն ծծող

Ազարեանը) Սուլթանի սիրելին է և իբր այդ սիրուց օգտուելով, նա միշտ աշխատում է ընդհանուր հայերի համար, որ իբր նա պիտի փրկէ տաճկահայաստանը և որ եւրոպացիներին այնքան խօսելու նիւթ տուողն էլ այդ արիւնռուշտ վագրն է: Եւ այդպէս քարոզում է ուղիղ Սասունի կոտորածի միջոցին:

Իսկ այդ միևնոյն աւազակը այդ իսկ կոտորածի ժամանակ պաշտօն է ստանձնում տաճկական հիւպատոսարանում, հազար մի ստոր տեղեկութիւններ թափում այնտեղ, ապա տաճիկ հիւպատոսի կողմից էլ ռուսաց միամիտ թերթերում հերքումներ է տպագրում հայ լրագրերի յայտնած զանազան տեղեկութիւնների մասին:

Հարիւրաւոր անմեղներ այդ մատնիչ գաղանի շնորհիւ բանտերն էին մտնում: Բայց ի՞նչ... դեռ Նոր-Նախիջևանի և Ռոստովի հայերից շատերը գուրգուրում են այդպիսի մատնիչներին և մատնակից դարձնում իրանց սեղաններին:

Արտաքին շռայլութիւնները միշտ աչքի են ընկնում Նոր-Նախիջևանում: Ընքեղ հագուստներն ու ունայն պաճուճանքը թէ կանանց, թէ տղամարդկանց համար առանձին իդէալ է համարւում:

Եւ մէկ-մէկ այդպէս հագնուելով ու քիչ էլ տների մէջ եւրոպական կահ-կարասիք մտցնելով, նորանք այնուհետև իրանց լուսաւորուած եւրոպացիների շարքն են դասում: Մինչև իսկ կովկասցի կամ տաճկաստանցի հայերին մատների արանքով են նայում, հաշուելով, որ նորանք դեռ ասիացի են, դեռ բիրտ են, զուրկ են քաղաքավարի ձևերով նիստ ու կացից:

Եւ քիչ չեն այդտեղ նիւթերը՝ թատրերկ գրողների համար:

Մի անգամ պատահեցինք մի երիտասարդ պարոնի: Դա ծառայում էր տեղական բանկերից մէկում. միջին հասակով, ածիլուած դէմքով, խարտեաշ մազերով մի պարոն էր, որի աչքերի խորքերը թափանցելով, նորան մեր անդրանիկ խորհուրդն էր ներկայացումների մասնակցել և միշտ եղուիտի դեր կատարել: Մօտ ծանօթացանք այդ պարոնի հետ և նորա մասին մեր այդ եղբակացութեան մէջ լիովին համոզուեցանք: Արտասուքը կարծես սրուակներով նա պահում է գրպանի մէջ: Կարդում էք նորա մօտ լրագրի կամ գրքի մէջ որ և է աղէտալի դէպք, նա իսկոյն աչքերն աղի լիճ է դարձնում, ապա համոզմունք էք յայտնում, որ դա սուտ է, ամենևին էլ արժանի չէ արտասուքի, նա ական-թօթափելում չորացնում է արտասուքը և ձեզ հետ բարկութեան ցասումն յայտնում:

Հարցնում ենք շատերից Գամառ-Քաթիպայի մասին, մեզ ծաղը ու ծանակով էին պատասխանում: Մեր տարաբախտ ականջներին հաւատալ չէինք կամենում: Ծաղը լսենք ո՞ւմ հասցէին. Մայր-Աբաթոյ մեծ հեղինակի, Հայոց գրականութեան պատիւ՝ Գամառ-Քաթիպայի հասցէին:

Այդտեղ մենք հասկացանք թէ՝ ինչու Հայոց մեծ բանաստեղծը Նոր-Նախիջևանն իւր համար դժոխք էր համարում: Մարդ սարսափում է այն լսածներից, երբ պատմում էին Գամառ-Քաթիպայի մասին: Ո՛րպիսի նեղութիւններ, ո՛րպիսի զրկանքներ է կրել այդտեղ Հայոց գրականութեան այդ նշանաւոր հսկան:

Հետևեալ դէպքը պատմեցին մեզ՝ մեծ բանաստեղծի մասին:

Մի անգամ մի հանդիսաւոր ճաշի ժամանակ աղանէրից մէկը ինչ որ խօսքով վերաւորում է Գամառ-Քաթիպային: Էլ չի համբերում Մայր-Աբաթոյ հեղինակը՝ բարկանում ու բացականչում է.

— Սրիկայ, դու չգիտե՞ս, որ կսատկես և քո անունը խանութիդ կոճակների նման կկորչէ ցեխի մէջ, իսկ ես կմեռնեմ և իմ անունը պատիւ կլինի իւրաքանչիւր հայի համար:

Բացատրութիւններն աւելորդ են: Ոչ միայն Նոր-Նախիջևանի, այլ հայ աղաների ամենամեծ մասը, որոնք հարստացել են մէկին ու միւսին կեղեքելով, կանհետանան աշխարհի երեսից, իսկ, ինչ կասկած, որ Գամառ-Քաթիպան միշտ կայ, միշտ անմահ է:

Ինչ մնում է հարուստներին, Նոր-Նախիջևանում մի տոհմական հարուստ չկայ: Նորանք բոլորն էլ երէկուայ պրէկաշչէնէր են. սայլապաններ, խոհարարներ, այս և միւսի կօշիկ սրբողներ: Եւ նենգ ճանապարհով ձեռք բերած հարստութիւններն էլ, ի հարկէ սարդոստայնի պէս յարատև չեն:

Մնանկանալն էլ հօ սովորութիւն — օրէնք է նորանց համար:

Ցաւ ի սիրտ այդ խաբեբաները ռուսական երկրում զբաղուելով և միշտ ռուսների հետ շփուելով, հայերի վերաբերմամբ խայտառակ գաղափար են տալիս ռուսներին:

Այն ինչ արմատիրցին իջնելով լեռներից, նոր ասպնջական գտնելով Կուբանի ափին, ռուս կառավարութեան հովանաւորութեան տակ ապրելով շարունակել է կապուած մնալ հողի, գութանի, արօրի հետ: Նա չէ զլացել փառաւոր եկեղեցիներ շինել, ուսումնարան բաց անել, այլ և էքրէզախօս լի-

նելով, ձգտել է չերքէզերէնը վերածել մայրենի լեզուի, ձգտել է ապրել մայրենի երկրի սիրով, յիշել է միշտ իւրայիններին, չի էլ դուրս եկել նահապետական կենցաղավարութեան շրջանակից, մեծ յանցանք և անպատուութիւն է համարել օտարադաւան կին առնելը, նոր-նախիջևանցին ընդհակառակն այդ բոլորն անց է կացրել թեթև աչքով: Օտարադաւան կին ունենալը նորա համար ամօթ չի համարւում; իսկ մայրենի լեզուով խօսելը, կանանց դէնյուլէ չհագնուելը, աղերանց թուղթ չխաղալը, ղանոոնէպոնէրի հետ էֆ չանելը, ուրիշների զրպանների վերայ չարամադրուելը, նա ապիտութիւն, յիմար ասիականութիւն է համարում:

Եւ այժմ ձրագով պէտք է փնտրել այդ քաղաքում փոքր ի շատ մաքուր հայերէն խօսողին, կամ մայրենի երկրով հեռաքրքրուողին:

Կան, որ հայերէն (Աստուած հայերէն համարէ) խօսում են, որ ծակ աղգասիրաբար փոշի են փչում աչ ու ձախ, բայց ահա լսեցէք նորանց հայերէնը, լսեցէք հէնց օրիորդին:

Զանգիկ Ռաֆէլէցի բո-լիան ալայ-մալայ եօք ալի, ատա՛, այն խայնէն ալ աղէ+ բո-լիա էր, ալլայը ըլանովի կոպէն խորնաշ էր:

Հայերէն է ընթերցող: Դուք չհասկացաք, ես էլ չէի կարող հասկանալ, եթէ ինձ չթարգմանէին:

Հայերէն խօսող նոր-նախիջևանցի օրիորդը ուզում է ասել. Հովանոցս վայր ձգեցի և կոթն ամբողջովին ոչինչ արի: Այնպէս էլ լաւ կոթ է՛ր... ամբողջովին փղոսկրից էր շինած:

Նոր-նախիջևանցին բարձր պաշտօններ ձեռք բերելու մեծ սէր ունի: Կարող կլինի վարել այդ պաշտօնը թէ չէ՝ նա այդ մասին չի մտածում: Նորան ձռձռան անուն է հարկաւոր: Եւ նա ոչ մի միջոց չէ խնայում քաղաքագլուխ լինելը, հոգևոր դպրանոցի հոգաբարձու դառնալու և վերջապէս այս և այն ընկերութիւնների անդամ կամ նախագահ ընտրուելու: Այդ տեսակ պաշտօնների համար էլ մտածում է ամեն դասակարգի պատկանող նախիջևանցին: Համալսարանական իրաւաբանի, բժշկի կամ մի այլ ուսումնականի հետ հաւասար՝ քաղաքագլուխ կամ մի այլ հաստատութեան ղեկավար լինելու տենդով բռնուած է և երէկուայ սայլապանը, մի գրագիրը, նոյն իսկ մի պրեկազնիկ: Ցանդգնութեան չափը չճանաչելը, ամեն տեղ քիթ խրելը մի տեսակ ախտ է այդ Դոնսկոյ հայերի համար:

Հայերի առևտրականութեան գլխաւոր վայրը Ռոստով քաղաքն է:

Եթէ մի այլ երկրից եկած հայ կամենայ տեղոյն հայ վաճառականներին տեսնել, նա չպիտի շփոթուի, եթէ խանութների ճակատներին կարդայ. Поповъ, Дьячковъ, Пономаревъ, Шапошниковъ, Шаповаловъ, Кожевниковъ, Яблоковъ, Грушевъ, Виноградовъ, Чумаловъ, Чугаевъ, Садовниковъ, ապա Зайцевъ, Лисицынъ, Медвѣдевъ, մինչև իսկ Теръ-Митрофановъ, Теръ-Никитинъ, Теръ-Яковлевъ, սորանք բոլորն էլ հայեր են և Հայաստանեայց եկեղեցու ուղղափառ զաւակներ:

Օրինակ՝ կարող էք թարգմանել և ռուսայնել Վարդանը կամ Կարապետը, որոնք որոշ միտք ունեցող անուններ են:

Գոնէ նոր-նախիջևանցին այդպէս է դարձրել. Կարապետը, որի բուն իմաստը ռուսերէն թարգմանւում է Предтечи, նոր-նախիջևանցին շինել է Կարպ, իսկ Վարդանը, որի ռուսերէնը չկայ, նոր-նախիջևանցին այդ էլ փոխել է Владиміръ-ի: Երէցփոխանը դարձրել են Թիթրեան, որ առնուած է ռուսերէն կոչուող բառից (իմա երէցփոխ) և միով բանիւ լոյս աշխարհ է գալիս մի լուսաւորչական հայ, որ առհմական ցուցակի մէջ անուանւում է Կարպ Վլադիմիրովիչ Տիթրով:

Այս ձևով մկրտւում են մինչև իսկ տեղոյն քահանաները: Այսպէս՝ տէր-Արսէն, տէր-Մկրտչեանը վերափոխւում ու դառնում է Арсентій Никитичъ կամ տէր-Յովհաննէս տէր-Պօղոսեանն՝ Իվան Պաւլովիչ և այլն:

Միմիայն մաւոր հիմնաւոր կրթութիւնը կարող է ամեն բան կերպարանափոխել: Իսկ Նոր-Նախիջևանը, որ Աստուծոյ խնամքով կանգուն է և որի արտաքինը միայն ճրագներով է լուսաւորուած, երբէք առաջ նայելու այժ չի կարող ունենալ, եթէ, կրկնում ենք, հին ժանգը չմաքրուի և նեխ, կորստաբեր կուսակցական ոգին չյանձնուի Լէդային, նաև այս և այն հաստատութիւնների ղեկն չյանձնուի ագէտ, բիրտ աղանէրի ձեռը:

Փոխադարձ ատելութիւնը, աղային հաճոյանալու իրար հասցէի ցեխ նետելը, աւելորդ է ասել, որ չի կարող բարի վախճան ունենալ:

Պէտք է փոքր ինչ հեռատես լինել...

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI-1922
именна, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0158857